

Կրթութուն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 31.01.2024թ. չորեքշաբթի թիվ 5 (1134)

Շնորհավո՛ր տոնդ, Հա՛յ գինվոր Հունվարի 28-ին երկիրը նշեց Հայոց բանակի օրը

**21-րդ դարը
մե՛րն է լինելու
(Վազգեն Սարգսյանի մտքերից)**



➤ Ես վախենում եմ մեր հասարակության այսօրվա անտարբերությունից՝ հնարավոր ռազմաքաղաքական բարդությունների նկատմամբ: Սթափվել է պետք, առջետուն ծանր անակնկալներ կան:

Ես վախենում եմ ընդդիմության ատելությունից՝ բանակի նկատմամբ: Սթափվել է պետք, դա նաև ձեր եւ ձեր երեխաների պաշտպան բանակն է:

Ես վախենում եմ իշխանությունների թուլացող ուշադրությունից՝ բանակաշինության նկատմամբ: Սթափվել է պետք, պատերազմը դեռ չի ավարտվել:

Վերջապես ես վախենում եմ բոլոր չվախեցողներից, անտարբերներից, արկածախնդիրներից, ժողովրդի բոլոր հնարավոր «փրկիչներից»:

➤ Աշխարհի ուժեղները, տեսե՛ք, թե ուր են հասել, իսկ մենք դեռ մտածում ենք՝ շտապել, թե չշտապել, «ըսել, թե չըսել»: Ինչի՞ն սպասել՝ Հայաստանի տնտեսության վերջնական կանգառի՞ն... Հայաստանի հայաթափմանը, թե՞ մինչև արևմտափորձերը առաքելականներիցս ավելի մեծ թիվ կկազմեն...

➤ Մեր պրոբլեմների մի 30-40 տոկոսը մակերեսի վրա եղած հարցեր են: Քարը ծուռ էր դրված՝ պետք է վերցնել, շտկել, ու կավարտվի այդ պատմությունը:

➤ Ոչ մի ծրագիր, որքան էլ այն փայլուն լինի, չի կարող իրականություն դառնալ, եթե չկա հավատք, նպատակին հասնելու համախմբվածություն, եթե մեզանից յուրաքանչյուրը չի մտածում, որ այս երկրի ճակատագիրը կախված է մի մարդուց, եւ այդ մարդն ինքն է: Եթե համոզված չէ, որ մենք, միայն մենք ենք կառուցելու մեր տունը: Եվ վերջապես, ավելի լավ է մեկ մոռ վառել, քան հավերժ բողոքել խավարից: Օգնենք, որպեսզի յուրաքանչյուրս վառի իր մոմը, եւ համոզված եմ՝ մոտ ապագայում Հայաստանը կհայտնվի լուսի մեջ:

➤ Ամեն բան չափից ավելի ակնհայտ է. դարձ սկսել ենք ողբերգությամբ, շարունակել ենք ձեռքբերումներով ու կորուստներով, պարտավոր ենք ավարտել հաղթանակով:

➤ Պատմությունը ցույց է տալիս, որ հաղթում են այն ժողովուրդները, որոնք ավելի կազմակերպված են եւ ռացիոնալ:

➤ Հայ ժողովուրդը չի ապրում իր տառապանքին ու տաղանդին արժանի կյանքով ...

➤ Մենք իրավունք չունենք թույլ տալ այնպիսի շռայլություն, ինչպիսին է տասնյակ կուսակցությունների եւ հոսանքների գոյությունը: Այս քաղաքական դաշտը պետք է կանոնավորվի, ինչպես հատուկ է քաղաքակիրթ երկրներին:

Հայաստանում էլ պետք է գործեն 3-4 դասական ուժեր, ավանդույթներ ունեցող եւ ավանդույթներ ձեւավորող, քաղաքական հստակ դեմք ու նկարագիր ունեցող եւ իր հետեւից ժողովուրդ տանող կուսակցություններ:


Այլապես, այս բզկտվածությունը կբերի նաև հասարակության բզկտվածության:

շարունակությունը՝ էջ 2



**Ուժեղ եւ մարտունակ
բանակ ունենալը մեր
ինքնիշխան իրավունքն է**

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ներկա է եղել Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորման 32-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառմանը: Հանդիսությանը ներկա են եղել նաև ՀՀ նախագահ Վահագն Խաչատրյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության ներկայացուցիչներ, ՀՀ բարձրագույն սպայակազմը, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ:



շարունակությունը՝ էջ 2

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
Ամենայն Հայոց Կաթողիկոսի
շնորհավորական ուղերձը՝
Բանակի օրվա առիթով**



Բանակի նվիրական օրվա առիթով՝ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայոց բանակի հրամանատարներին ու զինվորներին եւ համայն մեր ժողովրդին:

Արցախյան շարժման օրերից կամավորական ջոկատների եւ զինապարտների միավորումով կազմավորվեց հայոց կանոնավոր բանակը, որն ավելի քան երեք տասնամյակ, Արցախյան պատերազմների եւ Հայաստանի սահմանների Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների ընթացքում մարտնչեց անօրինակ սխրանքներով: Բազում քաջորդիներ անմահացան ընդունելով հանուն հայրենիքի նահատակության պատվը:

Միրելիներ, մեր տարածաշրջանում տիրող բարդ իրադրության մեջ առաջնային է Հայոց բանակի համակողմանի հզորացումը: Մեզ պատած աղետալի ողբերգությունների, Արցախի բռնազավթման հանդիման բռնաբերող ջանքերով ըստ ամենայնի պիտի սատարենք մեր բանակին, քանզի Հայոց բանակը երաշխավորն է մեր ժողովրդի խաղաղ ու արժանապատիվ կյանքի, ապահով գալիքի ու հայոց անկախ պետականության:

շարունակությունը՝ էջ 4

**Եթե հայ ես, ուրեմն՝ գինվոր ես,
անկախ նրանից՝ սուր է ձեռքինդ, խաչ, բահ, թե գրիչ**

21-րդ դարը մե՛րն է լինելու

(Վազգեն Սարգսյանի մտքերից)

սկիզբը՝ էջ 1

Վան վճռական պահեր ժողովուրդների ե պետության կյանքում, երբ պիտի ի հայտ գան վճռական գաղափարներ ե այդ գաղափարներն իրագործող մարդիկ, որ կկարողանան ժողովրդին իրենց հետեւից տանել: Հազարավոր բարեփառություն է, երբ ժամանակը, ժողովուրդը ե առաջնորդները գտնում են իրար:

1988թ. այդպես էր: Շատ կարճ տեւեց: Ցավոք սրտի: Ժամանակի պահանջը, ժամանակի ոգին ե ժամանակի առաջնորդները իրար համապատասխանեցին: Մեզ խանգարեց անհանդուրժողականությունը:

Ես երջանիկ մարդ եմ: Որովհետեւ ինձ պատիվ ընծեւծեւ իրականացնել այն երազանքները, որպիսիք փայլահայտ էինք գործողներս, լրագրողներս: Բայց դա բախտի բան չէ, ես եմ ընտրել իմ ճանապարհը: Երբ այդ ուղին ընտրեցի, չգիտեի, որ նախարար եմ դառնալու: Իմ գրած նախադասությունների համար չեմ կարծում, կեղծիք չկա: Ես հիմա էլ, որպես պաշտպանության նախարար, ինչ անում եմ, դարձյալ կեղծիք չկա: Միսալմունքներ կան, բայց կեղծիք չկա:

Եթե ուզեի, կունենայի ավելի շատ հետետորդներ, քան կողմնակիցներ: Բայց ուզում եմ ունենալ կողմնակիցներ, որոնք նվիրված լինեն ոչ թե ինձ, այլ այն գործին, որը ես անում եմ:

Ես իմ գործին շատ եմ հավատում:

Ես օրվա ե մոտակա նպատակներ դնող ե լուծող մարդ եմ: Այդ տեսակն եմ: 1989-ին, երբ խոսվում էր բազմապարտաբան թանկ ստեղծելու մասին, մենք Արարատում ստեղծեցինք մեր ինքնապաշտպանական ջոկատը, երբ ամբողջ հայ ժողովուրդը մտածում էր բազմապարտավորումներ ձեռք բերելու մասին, մենք մեր ջոկատը զինեցինք որսորդական իրացաններով ե ինքնաշեն նռնակներով: Հետո, երբ բոլորը խոսում էին ռմբակոծիչների մասին, ես, արդեն որպես պաշտպանության նախարար, հայայտեցի ե պատմաբանների առաջին չափաբաժինը: Հետո, երբ բոլորը խոսում էին հեռահար կայանքների մասին, ես փորձում էի Հայաստանի նորաստեղծ բանակի համար իրենաճու միջոցներ ե ինքնաթիռներ ձուլել: Եվ այսպես շարունակ: Արդյունքում՝ այսօր Ադրբեյջանն աղմկում է արդեն մեր հեռահար իրթիռների, Հայաստանի՝ որպես առումային պետության մասին: Կրկնում եմ՝ ես օրվա խնդիրներն դնող ե մոտակա նպատակներ իրագործող մարդ եմ:

Ամեն ինչ խառնվել է իրար, երրորդ դասարանի կրթությամբ որեւէ դուրսարժուկ մեկ ավտոմատով ու չորս դանակով կարող է ազգի ճակատագրի հետ կատակներ անել: Հրեշավոր կասկածն ու անհանդուրժողականությունը սրտներումս՝ վաղը ո՞նց եմք մեկնելու թիկունք ապահովելու: Միասնությունից խոսելով հոգնեցինք, Լժ-դեի ցիտելով հոգնեցինք, ու բան դուրս չեկավ... Հապաղելու իրավունք չունենք: Շտապեմք, քանի դեռ մութ ուժերը մեզ իրար դեմ չեն հանել, քանի դեռ ժողովուրդը, այնուամենայնիվ, հավատում է մեզ:

Միասնությունը կարող է սարեր շուռ տալ: Կարող է աշխարհի զարմացնել: Նաեւ դառնալ փաստարկ նույն աշխարհի համար: 21-րդ դարը հաղթանակած, պատվով մտնելու մեր միակ երաշխիքն է միասնությունը:

Երանի մեր բոլոր քաղաքական կուսակցություններն ու անհատներն այդ գիտակցությամբ առաջնորդվեն: Երանի նրանց օրինակ ծառայի, ոգևորի պարզ ու պինդ տղաների՝ իրենց հին ու նոր ընկերների օրինակը:

Ժողովրդին պետք է ուղղորդել, պետք է առաջնորդել, պետք է դաստիարակել: Աշխարհում չկան ուժեր ու թույլ ժողովուրդներ: Պատմության ընթացքի ինչ-որ մի պահի ի հայտ են գալիս մարդիկ, որ կարողանում են ճիշտ ուղղորդել իրենց ժողովուրդներին: Այդ հազվագյուտ պահերը կամ օգտագործվում են, կամ չեն օգտագործվում: Եթե ճիշտ ես ուղղորդում, ժողովուրդը ճիշտ ընթացքով է գնում: Հատկապես մեր ժողովուրդը իր գեղով, իր տեսակով, իր մշակույթով ավելի ընկալունակ է եւ ավելի ուժեղ:

Ասել եմ, էլի կասեմ՝ մեր պատերազմը քաջության, հերոսության փուլից արդեն անցել է դեպի տնտեսական-քաղաքական փուլ: Միայն հզոր տնտեսությունը կարող է ապահովել հզոր բանակի գոյությունը: Մեզ մոտ անբնական բան է կատարվել, որ բանակը առաջ է ընկել պետությունից: Այս միտումը հղի է լուրջ վտանգներով: Հզոր պետության քարշիջ ուժը տնտեսությունն է: Այն պետք է առաջիկա տարիների ընթացքում կարողանա հասնել եւ անցնել բանակից: Պետության գերխնդիրն է սա:

շարունակությունը՝ էջ 3

Ուժեղ եւ մարտունակ բանակ ունենալը մեր ինքնիշխան իրավունքն է

սկիզբը՝ էջ 1

Միջոցառման սկզբում նախ հնչել է ՀՀ պետական օրհներգը, այնուհետեւ ներկաները մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք են մատուցել հանուն հայրենիքի կյանքը նվիրաբերած հայրորդների հիշատակին:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել ուղերձով, որում, մասնավորապես, նշել է.

«Հայաստանի Հանրապետության մեծարժո՛ղ նախագահ,

Ազգային ժողովի մեծարժո՛ղ նախագահ,

Օրենսդիր, գործադիր, դատական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի՛ ներկայացուցիչներ,

Պաշտպանության հարգելի՛ նախարար, նախարարի տեղակալներ, պարոնայք գեներալներ եւ սպաներ, հարգելի՛ զինծառայողներ, հարգելի՛ ներկաներ, սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր մենք նշում ենք մեր բանակի հիմնադրման 32-րդ տարեդարձը, եւ այս օրը մենք նախեսառաջ ծնկի ենք իջնում մեր այն զինծառայողների, կամավորների առաջ, ովքեր ընկել են Հայաստանի Հանրապետությանը տված իրենց երդմանը հավատարիմ մնալով:

Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորման 32-րդ տարեդարձը, պետք է արձանագրել՝ ավելի շատ խորհելու, բանակաշինության եւ անվտանգության ոլորտում մեր ունեցած խնդիրներին, ընդհուպ ձախողումներին առերեսվելու ժամանակ է:

Այդ առերեսումը մեզ պարտադրում է արձանագրել, որ չի կարելի շարունակել ունենալ հնացած ստանդարտների եւ ռազմական գործի հնացած պատկերացումների վրա հիմնված բանակ, որովհետեւ սա կնշանակի կասկածի տակ դնել պետություն ունենալու մեր կամքը:

Առաջին բանը, որ պիտի փոխվի մեր բանակում, մտածողությունն է: Եվ այդ փոփոխությունը պետք է արտահայտվի ամեն նրբությամբ մեջ՝ սկսած համազգեստից, շարունակած յուրաքանչյուր զինվորականի արտաքին տեսքով, շարունակած մշտական տեղակայման վայրերում առկա միջավայրից, սպառազինությունից ու տեխնիկայից, զինծառայողների աշխատավարձից եւ սոցիալական երաշխիքների համակարգից, զինծառայողների պրոֆեսիոնալ հմտությունների նկատմամբ մեր պահանջներից եւ յուրաքանչյուր զինծառայողի գաղափարական պատրաստվածության աստիճանից: Մենք սկսել ենք այս գործընթացը, բայց նաեւ չեմ կարող ասել, թե ընթացում ենք բավարար արագությամբ:

Ինչպես պետական համակարգի բազմաթիվ օղակներում, այստեղ էլ, կարծում եմ, արագության մասին մեր պատկերացումները պետք է փոխվեն: Բանակում նույնպես արագության մասին պատկերացումները պետք է փոխվեն, ու այստեղ խոսքը ոչ միայն բարեփոխումների արագության մասին է, այլեւ բանակի գործողությունների արագության: Այն, ինչ մենք արագություն են համարել նախկինում, հիմա անհույս կերպով դանդաղ է՝ սկսած իրադրության գնահատման արագությունից, շարունակած որոշումների կայացման, հրամանատարման եւ իրանցների կատարման արագությունը:

Ռազմավարական առումով մենք ընթանում ենք պրոֆեսիոնալ բանակ ունենալու տրամաբանությամբ, եւ այս իմաստով «Պաշտպան հայրենյաց»



ծրագիրը վերջին տարիների մեր ամենամեծ հաջողությունն է, որը հենց այսօր պրոֆեսիոնալ բանակի հիմքն ու անկյունքն է դառնում: Սա մի համակարգ է, որ ժամկետային զինծառայողներին հնարավորություն է տալիս դառնալ առնվազն 5 տարվա պայմանագրային զինծառայող, կամավոր առեստավորման արդյունքում ստանալ 450 հազար, երբեմն 500 հազար դրամ եւ ավելի դրամ ամսական աշխատավարձ, ծառայել սեփական բնակավայրին մոտակա գործատու եւ ծառայության ընթացքում ապրել տանը՝ որպես պրոֆեսիոնալ, իսկ հնգամյա ժամկետի ավարտին միանվագ ստանալ 5 միլիոն դրամ, անկախ նրանից՝ կցանկանա եւս 5 տարով երկարացնել պայմանագրի ժամկետը, թե՛ ոչ:

Բայց նաեւ այս ֆոնին անհրաժեշտ եմ համարում ընդգծել՝ բանակը պետք է դադարի լինել էժանազին կենացների օբյեկտ կամ կենացների էժանազին օբյեկտ: Որովհետեւ, երբ փորձում ես անկանալ, թե ինչ է թաքցնում այդ կենացների խորքում, առերեսվում ես դառն իրականությանն առ այն, որ զորակոչի ենթակա տարիքային խմբի կեսից քիչն է զորակոչվում բանակ:

Սա կամ նշանակում է, որ մեր սերունդն առողջական ծանր պայրվեմներ ունի, կամ էլ զորակոչը Հայաստանի Հանրապետությունում մնում է կոռուպցիայի ամենածաղկուն միջավայրը, որտեղ միջանց հետ դաշնակցում են բժշկական հանրության, զինվորականության եւ հանրության ներկայացուցիչներ: Եթե այսպես է, իսկ նման հավանականություն կա, սա պետությունը քայքայող դաշինք է, ու մեր պարտքն է՝ ջարդել այդ դաշինքի ողնաշարը,

շարունակությունը՝ էջ 6





Խորհրդարան

Բարեփոխումներն ունենալու են հեղափոխական նշանակություն

Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ խորհրդարանում տեղի են ունեցել «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին օրենսդրական բարեփոխումներն ու հիմնարար ուղղությունները» թեմայով խորհրդարանական լուսամտեր:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտ նախարար Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է օրենքի նախագիծը՝ ընդգծելով, որ ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումներն ընդգրկված են «ՀՀ կրթության միջին 2030 թվականը զարգացման պետական ծրագրում»: Այս համատեքստում կարելի էրելով Աժ գլխադասային հանձնաժողովի հետ համագործակցված ու շարունակական աշխատանքը՝ նա շնորհակալություն է հայտնել Աժ գործընկերներին, ինչպես նաև միջազգային և տեղական կառույցների ներկայացուցիչներին՝ շուրջ երկու տարի այս նախագծի շուրջ աշխատելու համար:

Շնորհավորելով ներկայացրած Կրթության միջազգային օրվա առթիվ՝ նախարարը հանգում է հայտնել, որ առաջնահերթ խնդիր է կրթական և սոցիալական քաղաքականությունների համադրման հարթ ու տեսանելի դարձնել որակյալ մասնագիտական կրթություն ստանալու ճանապարհը բոլոր քաղաքացիների համար: Նրա խոսքով՝ մեր երկիրը ժառանգել է ՄԿՈՒ համակարգ, որը սպասարկում էր բոլորովին այլ տնտեսություն՝ այլ կառուցվածքով և մասշտաբներով: Ոլորտում ակնհայտ է թե՛ մասնագիտությունների, թե՛ ենթակառուցվածքների վերանայման օպտիմալացման արդիականացման խնդիրը: Ժաննա Անդրեասյանը կարծիք է հայտնել, որ պետությունն այս հարցում պետք է միայնակ չլինի, և մասնավորի հետ համագործակցությունն այլընտրանք չունի: Պետք է վերանայվեն նաև ՄԿՈՒ համակարգի ֆինանսավորման չափորոշիչները, որոնք, բացառությամբ որոշ դեպքերի, չեն վերանայվել 90-ականներից սկսած: Գործող չափորոշիչները հիմնականում չեն արտացոլում ներգրավված ծախսերի իրական մակարդակը, ոլորտում պետք է ներդրվեն կրթության կազմակերպման, ներառականության, որակի ու շարունակական ապահովման, միջազգայնացման որակյալ գործիքակազմեր:

Առաջարկվող օրենսդրական բարեփոխումները, ըստ նախարարի, ունենալու են հեղափոխական նշանակություն ոլորտի համար:

«Առաջինը հասկացությունների և սահմանումների ներդաշնակեցումն է. օրենքը կոչվում է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին», որն առավել բնութագրական է ՄԿՈՒ համակարգի համար: Ոլորտի անվանումը միջազգայնացման տրամաբանությունն է համապատասխանեցվում՝ ներառելով թե՛ որակավորում տվող ֆորմալ կրթության, թե՛ ոչ ֆորմալ կրթության ուսուցման հնարավորությունը: Առաջարկվող նախագիծը տալիս է ճկունության հնարավորություն, որը բերելու է միկրոորակավորումների շնորհիմամբ:

Վերացվում է մասնագիտական ուսումնական հաստատությունների երկու տեսակների՝ քոլեջների և ուսումնարանների միջև տարբերակումը, գործելու է միայն քոլեջ տեսակը՝



պահպանելով կրթական ծրագրերի մակարդակները՝ արհեստագործական և միջին մասնագիտական ուղղություններով:

Կարևոր փոփոխություններից է աշխատանքի վրա հիմնված ուսուցման ինստիտուցիոնալ ներդրման հնարավորությունը, որով ամփոփվում է վերջին հինգ տարիներին փորձարկվող դուալ կրթության փորձառությունը: Դրա հիման վրա է, որ օրենքում տրված են այն ձևակերպումները, որոնք օգնելու են կրթության կազմակերպման համար մեր հիմնական նշանաբանը դարձնել «Աշխատե՛ք՝ սովորելով» կամ «Սովորե՛ք՝ աշխատելով» կամ «Աշխատե՛ք և սովորե՛ք»: Սա դառնալու է ՄԿՈՒ ոլորտում կրթության կազմակերպման հիմնական ձևը», - շեշտել է Ժաննա Անդրեասյանը՝ հավելելով, որ ներդրվելու է նաև դուալ կրթության համակարգող մարմինը: Նրա տեղակեցմամբ՝ ներկայում 20 հաստատություններում շուրջ 24 մասնագիտություններով դուալ կրթական ծրագրեր են իրականացվում:

Հաջորդ բաղադրիչը կրթության կառավարման ու կազմակերպման համագործակցային մոդելի ներդրումն է, սոցիալական գործընկերության պատասխանատվությունը: Օրենսդրական փաթեթով անցում է կատարվում կրթության համակարգի որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին: Արմատապես վերանայվելու են կրթական ծրագրերի իրականացման մեթոդաբանական հիմքերը, վերանայվել են որակի ապահովման և վերահսկողության կառուցակարգերը, լիցենզավորման պահանջները: Ըստ նախարարի՝ ֆինանսավորման համակարգի հիմքում կրթական ծրագրի ապահովման արժեքն է դրվելու. «Ֆինանսավորման տրամաբանությունը ձեւավորելով ըստ մեկ ուսանողի կրթության արժեքի՝ խրախուսելու ենք մրցակցությունը», - ընդգծել նախարարը և հավելել, որ ոլորտում էապես զարգանալու են ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորությունները:

Նախարարը նշել է, որ ներդրվում է մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգ: Քոլեջների աշխատակիցները կունենան 200.000 դրամի չափով դրույքաչափի վերանայման հնարավորություն, այնուհետև, արդյունքներով պայմանավորված, 30, 40 և 50 տոկոսի չափով հավելավճարի ստացման:

ԿԳՄՍ նախարարի գնահատմամբ՝ կրթաթոշակային քաղաքականությունը եւս ոլորտում էապես փոխվել է.

սեպտեմբերից գերակա ուղղություններով մինչեւ 50.000 դրամի կրթաթոշակի հնարավորություն է տրվել արդյունաբերության, շինարարության և գյուղատնտեսության մասնագիտություններով սովորող ուսանողներին, ինչն արդեն հանգեցրել է այս ուղղություններով ընդունելության եական աճին:

«Ներառականությունը ոլորտի համար դարձրել ենք պարտադիր բաղադրիչ, և ներառական կրթությունը դառնում է յուրաքանչյուր ուսանողի կրթության իրավունքի ապահովման երաշխիք՝ կրթության մատչելիության, հավասար մասնակցության և որակի ապահովման միջոցով», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը խոսքում ընդգծել է ՄԿՈՒ ոլորտի կարելիությունն աշխատանքի և տնտեսության կարիքների ապահովման տեսանկյունից՝ ընդգծելով, որ ոլորտի կադրային դարբնոցը հզորացնելու պահանջը դարձել է հրամայական: «Միասին պետք է գտնենք համագործակցելու և կրթության միջոցով տնտեսությունը հզորացնելու ճանապարհը», - ասել է նա:

Սիսակ Գաբրիելյանը շնորհակալություն է հայտնել տեղական և միջազգային կազմակերպություններին, որոնք իրենց ներդրումն ու աջակցությունն են ցուցաբերել ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումներին:

Ելույթներ են ունեցել նաև միջազգային փորձագետները:

ԿԳՄՍ նախարարը պատասխանել է քննարկման մասնակիցների հարցերին:

Ներկաները, արժեւորելով ոլորտում իրականացվող բարեփոխումները, նշել են՝ դրանք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը: Խոսելով կրթության կազմակերպման մեր ձեռքի՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կարելիությունից, նշվել է, որ այն կբավարարի աշխատաշուկայի պահանջները: Անդրադարձ է եղել կրթություն-աշխատաշուկա խնդիրներին, ընդգծվել է պետություն-մասնավոր հատված սոցիալական գործընկերության կապի ամրապնդման անհրաժեշտությունը:

Եզրափակիչ ելույթում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել արդյունաբերության և սպորտի համար եւ պատրաստակամություն հայտնել լրացուցիչ քննարկելու հնչած առաջարկներն ու կարելի դիտարկումները:

21-րդ դարը մե՛րն է լինելու (Վազգեն Սարգսյանի մտքերից)

սկզբը՝ էջ 2

ժողովուրդը պիտի տեսնի իր զոհողությունների արժեքը, նա պիտի տեսնի թունելի վերջում շողարձակող լույսը: Վերջին ամիսներին մենք դարձյալ սկսել ենք ճիսթաղուններ կատարել, բոլորս մեր ընկերների շիրիմներին երդվում ենք, որ նրանց կիսատ թողած գործը կշարունակենք: Հիմա եկել է դրա ժամանակը:

Քաղաքական բոլոր տեսությունները, գաղափարական սխտեմներն ու կուսակցական կրթերն անցողիկ են: Կա ազգային շահերի երկաթյա օրենք: Իսկ ազգը, պետությունը միայն կուսակցությունները չեն: Դա նույնիսկ այս ժամանակահատվածում, այս փորձի հողի վրա ապրող 4 միլիոն հայերս չենք: Ազգը հանդես է գալիս հազարամյա անցյալում և ապագայում, որոնք միատիպական հավատի են մնայուն արժեքների միավորման մեջ ստեղծում են Հայաստանի կերպարը և տեղը այս արեւի տակ: Սինդեռե, ցավոք, այնքան ենք մանրացել, այնքան ենք դառել օրվա կրթերի ու քաղաքական կոնյունկտուրայի գերին, որ կորցրել ենք անցյալի ու ապագայի զգացողությունը: Մեր ներքին ժամգը մեզ ներսից ուտում ու պառակտում է մեզ, պառակտում է մեզ, պառակտում է մեր ժողովրդին: Ժողովուրդը կորցնում է հավատն իր ներուժի նկատմամբ, եւ սա ամենասարսափելին է: Մեր արած լավ գործերն անգամ մենք չենք կարողանում նկատել: Բացասման բացասումը մեր տունը քանդում է կամ կարող է քանդել:

Հասել է ուժեղի, ոգով ուժեղի ժամանակը: Ով անուր եղավ, նա էլ հաղթելու է: Փառք Աստծո, մինչեւ հիմա էլ մեր նվաճումները, հաղթանակներն անհամեմատ ակնառու են եղել, քան կորուստները, պարտությունները: Մեզինք, միմիայն մեզինք էլ կախված, թե, ի վերջո, ինչպես է լուծվելու Դարաբաղի հարցը:

Պատմությունն այսօր էլ մեզ հրաշալի հնարավորություն է ընձեռել վերհիշել մեր նախնյաց փառքը, հասնել ժամանակի գնացքին: Ավելին մեր ողջ պատմության ընթացքում մենք երբեք ավելի մոտ չենք եղել մեր վերջնական հաղթանակին. էլի մեկ-երկու լիարժեք քայլ. էլի մի քիչ համբերություն, փոխադարձ հանդուրժողականություն, և 21-րդ դարը մերն է լինելու:

Մենք մեր ազգային պատերազմը անընդհատ հետաձգել, բերել-հասցրել ենք 21-րդ դարի շեմին, հիմա էլ նստենք-մտածենք, թե այդ կռվում արժե, թե չարժե գոհվել: Երբեք ենք արել, որ կենաց ու մահու ընտրության կռիվ են դիմել: 1915 թ. առանց լուրջ դիմադրության թողեցինք, որ մեզինք միլիոն ու կեսին կտորեն: Տասնյակ հազարավոր մարդիկ այս ընթացքում գոհվեցին բնական աղետներից: Տարիներ հետո սերունդները մեր մասին դատելու են ոչ թե նրանով, որ 1989-1995թթ. հինգ հազար հրաշալի զինվոր կորցրինք, այլ այսպես՝ ստեղծեցինք պետություն, թե՛ ոչ, պաշտպանեցինք մեր հայրենիքի սահմանները, թե՛ ոչ: Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ժամանակային ինչ-որ հանգրվանում իրենց պատերազմը տվել են: Հաղթել են, պետություն են ստեղծել այն ժողովուրդները, որոնք պատերազմի կես ճանապարհին չեն հոգնել: Ռուսները, երբ զգացին, որ բանակների պատերազմում տանուլ են տալիս Նապոլեոնին, հնարեցին Հայրենական պատերազմը: Եվ դա ամենագեղեցիկ բանն է, որ երբեւէ հնարել է որեւէ ժողովուրդը: Ասելս այն է, որ պատմության շառավիղներում մենք չցուցաբերեցինք համապատասխան կամք, հավաքականություն, չունեցանք մեր 50 հազարանոց բանակը, չունեցանք Հայրենական պատերազմ հնարելու ռուսական կրաշագործ միտքը, այլապես այսօր ֆրանսիացու պես մեծափորոզեինք, կսիրեինք, դեմոկրատիա կխաղայինք, մարդու իրավունքներից կխտստեինք, կենդանիների և բնության պահպանության շարժումները կծավալեինք, կովկասյան տունը կառուցելու գաղափար կնոգոնեինք:

Հայ ժողովուրդը վերջին տարիներին համազգային սխրանք է գործել, և անչափ ցավալի, ճակատագրական կլինի, եթե թյուրիմացությունների, անվստահության, անմիաբանության պատճառով հանկարծ տանուլ տանք արյունով ու մաքառումներով ձեռքբերվածը:

Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմության ընթացքում գոնե մեկ անգամ իր կռիվը պիտի մինչեւ վերջ տա: Աշխարհի ուժեղներն այդ բանը արել են միջին դարերում, մյուսները՝ ավելի ուշ, և յուրաքանչյուրն ըստ արժանվույն իր տեղն ու դերն ունի այս արեւի տակ:

Ժողովուրդ, պատերազմը չի՛ ավարտվել: Հի՛ ավարտվել: Աստված գիտի՛ ինչ է լինելու: Մի քիչ թուլացանք, պարտվելու ենք: Ձգո՛ւն եղեք, որ չպարտվեք:

Մտածե՛ք էս երկրի մասին: Մտածե՛ք էս բանակի մասին. սա է էս երկրի փրկությունը: Սա է, էսօր, ցավալիորեն, ամենակայացած արժեքը: Ցավալիորեն:

Մտածե՛ք էս երկրի մասին: Հարունակությունը՝ էջ 4

21-րդ դարը մե՛րն է լինելու (Վազգեն Սարգսյանի մտքերից)

սկզբը՝ էջ 3

Վարենուր ժողովրդի ոգին է: Ոգով եւ սոցիալական ավելի վատ պայմաններով կարելի է պատմական կտրվածքով հերոսություններ անել: Առանց ոգու՝ սոցիալական ամենալավ պայմաններում անգամ կարելի է դառնալ անդեմ, անգույն եւ աշխարհի հոգրների հետ նույն սեղանի շուրջ նստելու իրավունք չունեցող մի զանգված:

Տարածաշրջանը, ուր մենք ապրում ենք, լավագույններից չէ նաեւ բարոյական չափանիշների իմաստով, մեր ոչ մի հարեւանից մենք բարձր կազմակերպվածության, կարգապահության, պետականության դասեր առնել չենք կարող: Էլ չեմ խոսում տարածաշրջանային մենթալիտետի համարում ստացած կաշառակերության մասին: Եվ եթե մեր հարեւաններից յուրաքանչյուրը Մեծ Աշխարհի հետ հարաբերություններում այս ամենը կոմպենսացնող որեւէ ծանրակշիռ խաղաքարտ ունի՝ ծավալային, քանակային, ռեսուրսային, ապա մեզ մնում է մյուսներից ուղղակի մեկ գլուխ ավելի կազմակերպված, նպատակասլաց, բարոյական լինել վերջապես: Ակնհայտ ճշմարտություն է, որ լավ հավաքված փոքրը, քիչը՝ հաճախ ավելի ուժեղ է հզոր է, քան վատ հավաքված մեծն ու շատը՝ լինի դա պետություն, բանակ, թե ընտանիք:

Եթե մենք իսկապես պետական այրեր ենք եւ մեր պետությանը նայում ենք ոչ թե մեկ օրվա կտրվածքով, այլ հավերժության, պետական ծրագիր պիտի մշակենք: Այսօր այդ ծրագրերի մասին խոսելը նույնիսկ ծիծաղ կարող է առաջացնել, որովհետեւ առօրյա խնդիրների մեջ այնքան ենք խրված, եւ այնքան լուծված չեն այդ խնդիրները, որ հեռանկարային ծրագրերի մասին խոսելն ապագայի խնդիր է թվում: Բայց այդպես չէ: Ամենուր ասել են, ձեզ էլ են խնդրում՝ չհուսահատվեք: Մեր բոլորի վիճակը, ամբողջ ժողովրդի վիճակն իսկապես ծանր է, բայց անհուսալի չէ: Մենք, հիշենք, ավելի ծանր տարիներ ու ավելի ծանր օրեր ենք ունեցել: Հայրենական մեծ պատերազմից հետո, նաեւ այս պատերազմի տարիներին՝ 1991-1992թթ.: Հաղթահարեցինք, ապրեցինք: Սա էլ ենք հաղթահարելու: Անկասկած, հաղթելու ենք նաեւ տնտեսական պատերազմում: Հայ ժողովուրդը աշխատող, ստեղծագործող ժողովուրդ է, երբեմն անհրաժեշտ է նրան ուղղակի չխանգարել: Բարության դաշտ է պետք, փոխըմբռնումի դաշտ է պետք, վստահության դաշտ է պետք: Մեր ամենամեծ ցավն անվստահությունն է, վստահության ճգնաժամը: Մենք կարողանալու ենք դա հաղթահարել, եւ ինչ-որ բան այս երկրում, անկասկած, փոխվելու է: Վերջապես, մեզ հետ, թե առանց մեզ, դուք անպայման ոտքի եք կանգնելու: 21-րդ դարը հաստատ ծերն է լինելու, բոլորովին չկասկածե՛ք:

Ես ասում եմ՝ դավաճանություն է ժողովրդին ներշնչել, թե ինքը փոքր է ու անզոր: Երեք միլիոն, թե երեք հարյուր միլիոն՝ օրհասի պահին պայքարողը շատ-շատ մեկ միլիոնն է: Իսկ մեկ միլիոն անձնուրաց պայքարող ազգն իր միջից կարող է հանել: Ապացուցված բան է: Մի բան է միայն անհրաժեշտ. սնապարծության ու արկածախնդրության փոխարեն՝ լրջմտություն է պատասխանատվություն: Որպեսզի դուրսարժուկները կործնե՞նք ծեծելու ասպարեզ չունենան: Որպեսզի ինքնապաշտպանության գործը չվերածվի ինքնասպանության: Ես գործը պետական մոտեցում է պահանջում եւ ենթադրում է պետականություն: Պահը չկորցնենք, հապաղելը հանցագործություն է, տղերք:

Ես հավատում եմ Հայաստանի ապագային: Ես հավատում եմ մեր տնտեսական, գիտական ներուժին: Ես համոզված եմ, որ ինքներս ենք մեր տունը կառուցելու, բոլորս միասին: Ես համոզված եմ, որ միայն միասնականության դեպքում՝ ոչ մերկապարանոց բացականչությունների, այլ իրական, գիտակից միասնականության դեպքում միայն դրական լիցքերով մենք կարող ենք ոտքի կանգնեցնել մեր երկիրը: Պիտի կրկնեն իմ խոսքերը՝ Հայաստանը երբեք ավելի մոտ չի եղել վերջնական հաղթանակին: Մենք ունենք կայուն, մնայուն արժեքներ: Կայուն, մնայուն արժեքների այդ դաշտի վրա մենք ունենք իրաշալի հնարավորություն կառուցելու մեր երկիրը եւ 21-րդ դարը դարձնելու Հայաստանի դար: Սա է իմ համոզմունքը: Սա է շարժման համոզմունքը: Կոչ եմ անում բոլորիդ՝ համերաշխության պայմաններում միասնական լուծել այս խնդիրը: Եվ ամենեւին կարելու չէ, թե ով կառաջնորդի այդ շարժումը:

«Ինձ ժողովուրդը չի ճանաչում, ինձ նորմալ ճանաչում են իմ նեղ շրջապատի մարդիկ: Մնացյալը գիտեն ինձ մորուքով, գիտեն ջղայնացած, գիտեն քրտնած, այսօրվա կերպարը դա է: Ինձ չեն հասկանում, ինձնից վախենում են: Իրենց համար արջի կերպար են ստեղծել ու իրար վախեցնում են: Մեկ-մեկ ես էլ եմ վախեցնում, որ չեմ հասցնի, որ ժամանակ չեմ ունենա, ցանկություն չեմ ունենա, չգիտեմ էլ ինչ չեմ ունենա ժողովրդին ասելու՝ ա՛յ ժողովուրդ, իրար հասկանա՞նք, ճիշտ հասկանանք իրար, ես Աստված չեմ, ես զինվոր եմ, ես Հայ եմ, ես ...»: Չեն հասկանա: Դրա համար էլ չեմ ասում: Ամեն մարդ ինքն իր առաջ պիտի պատասխան տա՝ ով է ինքը:

Այց «Եռաբլուր» պանթեոն

Բանակի օրվա առթիվ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ նախագահ Վահագն Խաչատրյանի, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ՀՀ բարձրագույն դեկլարացիայի հետ այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցել իրենց կյանքը հայրենիքի անկախության համար զոհաբերած հայրերին եւ հիշատակին:

Վարչապետը ծաղիկներ է խոնարհել Սպարապետ Վազգեն Սարգսյանի, Անդրանիկ Օզանյանի շիրիմներին եւ ծաղկեպսակ զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշահամալիրին:



Սուրբ Պատարագ եւ Հանրապետական մաղթանք

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Սուրբ Գայանե վանքում, Հայոց բանակի օրվա կապակցությամբ, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագին էր ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Հոգեշնորհ Տեր Մովսես վարդապետ Սարգսյանը:

Պատարագի սրբազան արարողության ավարտին, Հայոց բանակի 32-րդ տարեդարձի առիթով, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Գերաշնորհ Տեր Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանի, կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ընթացքում հոգևոր դասը եւ արարողությանը ներկա հավատացյալ ժողովուրդը աղոթք բարձրացրեցին առ Աստված Հայաստան աշխարհի խաղաղության, անասանության եւ Հայոց բանակի հաղթական առաջընթացի համար:

Նախագահ Վահագն Խաչատրյանի շնորհավորական ուղերձը՝ բանակի կազմավորման օրվա կապակցությամբ



Սիրելի՛ հայրենակիցներ,
Հայոց բանակի գեներալներ, սպաներ եւ զինվորներ, զինծառայողներ եւ պահեստազորայիններ,

1992 թվականի հունվարի 28-ին Ձինված ուժերի կազմավորումն անկախության եւ ինքնիշխանության համար պայքարում մեր ժողովրդի նվիրական իղձերի բյուրեղացումն էր, որն ապացուցում էր Հայաստանի Հանրապետության լինելիության իրավունքը:

Ավելի քան երեք տասնամյակի ընթացքում Ձինված ուժերն անցել են կայացման դժվարին ուղի՝ մեր պետականության կերտման հետ համաքայլ: Այս ճանապարհին բանակը հաղթահարել է բազմաթիվ փորձություններ, նվաճել հաղթանակներ եւ ճաշակել կորուստների դառնություն: Բայց այս ամենի հանրագումարում մեր բանակը եղել է մնում է մեր պետության, հայրենիքի ու քաղաքացիների անվտանգության ու պաշտպանության ամենազինվոր եւ ամենավստահելի երաշխավորը:

Այսօր մենք, տոնելով բանակի կազմավորման 32-րդ տարեդարձը, խոնարհվում ենք հանուն մեր երկրի անկախության ու անվտանգության զոհվածների հիշատակի առաջ եւ միաժամանակ մեր երախտիքի խոսքն ու շնորհակալությունն ենք հայտնում Հայոց բանակի զինծառայողներին, որոնք անկախ եղանակային կամ որեւէ այլ պայմաններից, անձնվիրաբար հսկում են մեր երկրի սահմանների անդորրն ու մեր քաղաքացիների անվտանգությունը:

Սիրելի՛ ժողովուրդ,
Շնորհավորում եմ բոլորիս՝ բանակի կազմավորման օրվա կապակցությամբ եւ մաղթում ոգու ամրություն, ուժ ու կորով մեր բոլոր զինծառայողներին՝ հանուն Հայաստանի Հանրապետության խաղաղության եւ հզորացման:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը՝ Բանակի օրվա առիթով

սկզբը՝ էջ 1

Գոհությամբ ենք հաստատում, որ մեր հոգևոր սպասավորները հովվական խնամքի համար եղել են եւ լինելու են Հայոց բանակի սպաների ու զինվորների կողքին, որպեսզի զորացնեն ոգին մեր քաջարի մարտիկների եւ ամուր պահեն նրանց հավատքն ու հույսն առ Աստված:

Այսօր մենք մտահոգ ենք աշխարհում առկա լարված ու պատերազմական իրավիճակի, մասնավորապես մեր հայրենիքի շուրջ ծավալվող իրադարձությունների, մեր պետության նկատմամբ դրսևորվող նվաճողական նկրտումների պատճառով: Հավատն ունենք, որ Աստծո օգնությամբ, ուժեղ բանակով եւ համազգային միաբանությամբ կարող կլինենք դիմակայել մարտահրավերներին եւ հաստատել մեր պետության եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի լուսավոր գալիքը:

Եռաբլուրում, հայրենիքի սրբազան հողում ամփոփված մեր նահատակների քաջարի սխարանքը եւ լույս հիշատակը թող մեզ համար դառնան սրբազան ավանդ՝ անմկազ պահելու հայրենյաց սերը եւ նվիրումը, մեր ցավն ու վիշտը դարձնելու ուժ ու վճռակամություն հանուն մեր հայրենյաց շենացման ու բարգավաճման:

Բանակի այս նվիրական օրը աղոթում ենք՝ հանուն հայրենիքի զոհված հերոս հայրերի հոգիների հանգստության համար եւ հայցում շուտափույթ վերադարձ գերյալ հայրերին ու անհայտ կորածներին: Թող Տերը խաղաղ ու անվտանգ ծառայություն շնորհի մեր զինվորներին ու սպաներին եւ Իր խնամքի ներքո օրհնի ու պահպանի հայրերի մեր երկիրը եւ աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին այսօր եւ միշտ. ամեն:

Պարույր Սեւակ - 100

Խնկարկում՝ գրողի շիրիմի մոտ

Հայ մեծանուն բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ Պարույր Սեւակի ծննդյան օրվա կապակցությամբ նախարար Ժաննա Անդրեասյանը այցելել է Սեւակի ծննդավայր Չանգակատուն՝ ծաղիկներ խոնարհելու գրողի հիշատակին: Նախարարին ուղեկցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը և Արարատի մարզպետ Սեդրակ Թեոնյանը:

Այցի շրջանակում Պարույր Սեւակի տուն-թանգարանի տնօրեն Սեւակ Ղազարյանը նախարարին ներկայացրել է թանգարանի հիմնադրման

պատմությունը և առանձին ցուցանումները: Ըստ Սեւակ Ղազարյանի՝ ցուցասրահի պատին նկարիչ Սարգիս Մուրադյանի՝ Պարույր Սեւակին նվիրված որմնանկարն է, որում ներկայացված են գրողի կյանքի և ստեղծագործության կարեւոր շրջափուլերը: Թանգարանի նախասրահ-դահլիճում ցուցադրված են բանաստեղծի կյանքի ու ստեղծագործական տարբեր փուլերին վերաբերող ցուցանումներ՝ անձնական իրեր, վավերագրեր, ձեռագրերի պատճեններ, տարբեր լեզուներով հրատարակություններ: Ցուցասրահի

մի անկյունում ճշգրտությամբ վերարտարված է Պարույր Սեւակի երեսանյան բնակարանի աշխատասենյակը՝ բնօրինակ կահույքով և ցուցանումներով:

Նախարարը հետաքրքրվել է տուն-թանգարանի գործունեությամբ և առաջիկա ծրագրերով: Տեղում քննարկվել են թանգարանի միջավայրում տարբեր նախագծեր իրականացնելու հնարավորությունները, այն թե համայնքային կյանքի աշխուժացման, թե՛ ստեղծագործական կենտրոն դարձնելու հեռանկարները:



ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի շնորհավորական ուղերձը՝ Կրթության միջազգային օրվա կապակցությամբ

Հարգելի՛ հայրենակիցներ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած բանաձեռով՝ հունվարի 24-ը հռչակվել է Կրթության միջազգային օր՝ ի նշանավորումն համաշխարհային խաղաղության և կայուն զարգացման ապահովման գործում կրթության դերի: Կարծում են՝ այս գաղափարն ավելի քան արդիական է, և այն մղում է ավելի մեծ ջանքերով ամրապնդել կրթության հիմքերը, արժեւորել դրա դերն ու հիմնարար նշանակությունը հասարակությունների և պետությունների զարգացման, ներդաշնակ հարաբերությունների ձեւավորման և կայացման գործում:



Հայաստանի Հանրապետությունը կրթական տարբեր մակարդակներում բարեփոխումների փուլում է գտնվում, և մենք արդեն հասցրել ենք արձանագրել մեր առաջին հաջողությունները, որոնք բազմապատկվելու են շարունակական աշխատանքի, միասնականության և համառ ջանքերի շնորհիվ: Մենք հավատում ենք, որ այսօրվա համայնքային աշխատանքը վաղվա բարեկեցության, իրավագիտակից հանրության, կայուն զարգացման գրավականն է:

Մենք հանրապետության բոլոր դպրոցներում փուլաբար եղանակով ներդրել ենք հանրակրթության մոդերնիզացիայի շրջանակում կրթությունը ապահովելու տեսլականով, ակտիվ աշխատանքներ ենք տանում «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման ուղղությամբ՝ միջազգային չափանիշներին համահունչ բուհական համակարգ և ենթակառուցվածքներ ունենալու նպատակով:

Հենց այսօր՝ Կրթության միջազգային օրը, Ազգային ժողովում օրենսդիր գործընկերների հետ համատեղ լուծումներ ենք իրականացնում «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախորդ տարի՝ բարեփոխումներին զուգահեռ, մենք կարողացանք առանց համակարգային շեղումների ապահովել նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության իրավունքի շարունակականությունը: Դեռ բազում անելիքներ կան այս ուղղությամբ, և երկար ճանապարհ ունենք անցնելու:

Մեր հասարակությունը մշտապես առանձնակի կարելություններ է մոտենում կրթության ոլորտում իրականացվող բոլոր գործընթացներին՝ դրանց նկատմամբ ցուցաբերելով ընդգծված ուշադրություն: Այսպիսի համայնքային ուշադրությունն ավելի է մեծացնում կրթության առանցքային դերակատարների պատասխանատվությունը մեր երեխաների ապագայի և պետության զարգացման հանդեպ:

Մաղթում են, որ երբեք չփոխենք մեր պատկանելի վերաբերմունքը կրթության կարեւորության հանդեպ, շարունակենք ինքնակրթվել ու կրթությամբ վարակել մեր շրջապատը՝ հավատով, որ հենց կրթությամբ ենք կարողանալու փոխել և ավելի լավ դարձնել հասարակությունն ու պետությունը:

Պարզեւատրվել են մրցույթի հաղթողները

Պարույր Սեւակի ծննդյան 100-ամյակի առիթով ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունել է «Եղիցի լույս. Սեւակ-100» մրցույթի 7 հաղթողներին և պարգևատրել նրանց՝ շնորհակալագրերով ու խրատական նվերներով:

Միջոցառմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը:

Նախարարը շնորհակալություն է հայտնել մասնակիցներին ակտիվության համար. «Մենք այսօր նշում ենք մեր ամենանշանավոր գրողներից մեկի՝ Պարույր Սեւակի 100-ամյակը, որի շրջանակում կազմակերպված մրցույթում ավելի քան 4000 սովորողներ փորձել են լինել առաջինը, բայց հենց ձեզ է հաջողվել դա: Հույս ունեն դուք կլինեք լավ օրինակ նաև ձեր դասընկերների համար, որոնք ևս չեն վարանի և կմասնակցեն առաջիկայում նախատեսված այլ մրցույթների»: Նախարարն ընդգծել է, որ մրցույթները ոչ միայն բարձրացնում են իրագրականությունը տվյալ գործի մասին, այլևս դառնում են յուրօրինակ կրթական

գործընթաց: Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել նաև մանկավարժներին, որոնք խրախուսել են և ջանքեր ներդրել, որպեսզի աշակերտները սկսեն հետաքրքրվել և կարելորել գրողների կյանքն ու գործունեությունը: Նախարարի դիտարկմամբ՝ այստեղ կարելու է ինչպես ուսուցչի, այնպես էլ ընտանիքի դերը: Հանդիպմանն աշակերտները հայտնել են իրենց տպավորությունները, հատկապես ընդգծել են մրցույթների անցկացումը գրողի մասին իրազեկվածության բարձրացման, նրա ստեղծագործական գործունեության հանդեպ հետաքրքրությունների ընդլայնման տեսանկյունից:

«Ես նախկինում այդքան էլ հետաքրքրված չէի Սեւակով, սակայն այժմ ցանկություն ունեմ ուսումնասիրելու, ավելի շատ ճանաչելու», - ասել է Նանե Ներկարյանը՝ Տավուշի մարզի Գանձաբարի միջնակարգ դպրոցից: Իսկ Գեղարքունիքի մարզի Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի աշակերտ Միլենա Կոչյանը պատմել

է, որ ամեն օր զարթուցիչով պլանավորել է ժամը 20:00-ն բաց չթողնելու մրցույթը, և բազմաթիվ փորձերից հետո այս անգամ նրան հաջողվել է լինել առաջինը:

Նախարարը հետաքրքրվել է ո՞ր ստեղծագործությունն են ամենաշատը սիրում աշակերտները, ի՞նչ գիտեն Սեւակի թարգմանական գործունեության մասին, եղե՞լ են թանգարանում, թե՞ ոչ, ի՞նչ է գրականությունը նրանց համար և այլն:

Երեւանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՅ հեռակետային վարժարանի 10-րդ դասարանի աշակերտ Արման Աստվածատրյանը, որը եւս սիրում է ուսումնասիրում է գրականություն, ուներ նաև առաջարկ Սեւակի 100-ամյակի կապակցությամբ: Աշակերտն առաջարկել է «Արամ Խաչատրյան» համերգասրահում սիմֆոնիկ երաժշտության և Սեւակի բանաստեղծությունների համադրությամբ համերգ կազմակերպել:

Ի պատասխան առաջարկի՝ նշվել է, որ այն կքննարկվի միջոցառումների ցանկում:

Տիգրան Մանսուրյան - 85

Հրեյանական համերգ



երիտասարդներին նրանց ամեն հաջող կատարման համար: Եվ միայն պատկերացնել է պետք, թե ինչ թեւեր են առնում մեր երիտասարդները Ձեր ամեն բանից ու գնահատականից: Իսկ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության համար Ձեր գրած մեղեդին արտահայտում է Ձեր գորովանքը մեր երկրին: Դա Ձեր անուշ Հայաստանն է, որն ամբողջությամբ վերադարձնում է Ձեզ նույն գորովանքն ու սերը: Մաղթում են մեզ բոլորիս, որ երկար վայելենք Ձեր ներկայությունն ու ստեղծագործությունը: Առողջություն, ուժ ու եռանդ Ձեզ»:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի 85-ամյակի առթիվ կազմակերպել է հրեյանական համերգ: Միջոցառմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը:

Նախարար Ժաննա Անդրեասյանը հանդես է եկել շնորհավորական խոսքով. «Միքելի՛ Մաեստրո, Ջերմորեն շնորհավորում են Ձեզ ծննդյան 85-ամյակի առթիվ: Պատիվ է լինել Ձեր ժամանակակիցը, վայելել Ձեր ներկայությունը և արվեստը: Մի առիթով հիշել էիք Արթիկում անցկացրած Ձեր օրերը և պատմել էիք այն մասին, որ փողոցում, երբ բարձրախոսներից երաժշտություն էր հնչում, Ձեր խաղը դադարեցնում էիք և մոտ գնում վայելելու այն: Նույնն այսօր տեղի է ունենում մեզ հետ, երբ հնչում է Ձեր երաժշտությունը: Ինչ անելիք էլ որ ունենանք, փորձում ենք մի պահ կտրվել և վայելել այն: Սա պատահական չէ, որովհետև Ձեր արվեստը դիպչում է յուրաքանչյուրիս հոգուն և դառնում է մեր կյանքի ընկերը: Ոչ միայն արվեստը, այլև Ձեր մարդկային կերպարը եւս արժանի է ամենաբարձր գնահատականի: Վերջերս Ձեզ հետ Կոնսերվատորիայում ամփոփիչ համերգին էիք: Ես ուղղակի հիացա, թե ինչպես էիք ոգևորում: Իսկ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության համար Ձեր գրած մեղեդին արտահայտում է Ձեր գորովանքը մեր երկրին: Դա Ձեր անուշ Հայաստանն է, որն ամբողջությամբ վերադարձնում է Ձեզ նույն գորովանքն ու սերը: Մաղթում են մեզ բոլորիս, որ երկար վայելենք Ձեր ներկայությունն ու ստեղծագործությունը: Առողջություն, ուժ ու եռանդ Ձեզ»:

Աշխարհի հետ

Ներսիսյան դպրոցի 200-ամյակի առթիվ

Թբիլիսիի Ներսիսյան հոգեւոր դպրոցի 200-ամյակի կապակցությամբ Թբիլիսիի Կովկաս համալսարանում տեղի է ունեցել ցուցահանդեսի և հուշատախտակի բացում:



«Թբիլիսիի Ներսիսյան հոգեւոր դպրոց 200» խորագիրը կրող ցուցահանդեսի բացման արարողությանը ներկա են եղել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղեկակ Արթուր Մարտիրոսյանը, Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Գիորգի Ամիլխվաբիձե, Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը, ՀՀ-ում Վրաստանի դեսպան Գիորգի Շարվաշիձե, Կովկաս համալսարանի ռեկտոր Կախաբեռ Կործաիան եւ այլք:

Միջոցառումը կազմակերպվել է Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության եւ Թբիլիսիի Կովկաս համալսարանի կողմից:

Ցուցահանդեսում ներկայացվել են ավելի քան 200 արխիվային փաստաթղթեր եւ լուսանկարներ, որոնք պահվում են Հայաստանի եւ Վրաստանի ազգային արխիվներում եւ Ազգային գրադարաններում, Հայաստանի եղիշե Չարենցի անվան արվեստի եւ գրականության, Պատմության, Սարդարապատի, թանգարաններում, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում եւ մասնավոր հավաքածուներում:

Ողջույնի խոսքով հանդես են եկել Կովկաս համալսարանի նախագահ Կախա Շենգելիան եւ Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը: Ցուցահանդեսի հեղինակ, վիրահայ հասարակական գործիչ Լեւոն Չիղիկյանը ներկայացրել է ցուցադրվող լուսանկարների պատմությունը:

Միջոցառման ավարտին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւ Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Գիորգի Ամիլխվաբիձե համալսարանի գլխավոր մուտքի առջեւ բացել են Կովկաս համալսարանի շենքի պատմությունը ներկայացնող հուշատախտակը:

Ցուցահանդեսը Կովկաս համալսարանում կշարունակի գործել առաջիկա երեք շաբաթների ընթացքում:



Ուժեղ եւ մարտունակ բանակ ունենալը մեր ինքնիշխան իրավունքն է

սկիզբը՝ էջ 2

Պետք է նաեւ արձանագրել, որ ոչ մի պրոֆեսիոնալ բանակ պատերազմական իրավիճակներում միայնակ ի վիճակի չէ պաշտպանել երկրի անվտանգությունը եւ մարտունակ պահեստազոր ունենալը մեր հաջորդ ռազմավարական խնդիրն է: Այս իմաստով, սովորական ժամկետային զինծառայությանը զուգահեռ, 25-օրյա վարժական հավաքները չափազանց կարեւոր նշանակություն ունեն: Բայց հենց այսօր մենք տեսնում ենք բազմաթիվ բացեր այդ համակարգում եւ ակնկալում են, որ վճռական որոշումներով այդ պրոբլեմները լուծվեն: Այդ պրոբլեմները սկսվում են գործառնական մակարդակից, մինչեւ 25-օրյա վարժական հավաքների որակն ու բովանդակությունը: Առավելեւս այստեղ զինվոր-զինվոր, զինվոր-սպա, սպա-սպա հարաբերությունների լրջագույն ճեղքեր ունենք, որ պիտի լրացնենք: Ընդհանրապես, բանակը բաց կամ կիսաբաց ռեժիմի քրեակատարողական հիմնարկ դարձնելու բոլոր փորձերն ու գործոնները պետք է արմատախիլ անել հետեւողական ու վճռական քայլերով: Սա վերաբերվում է թե՛ 25-օրյա վարժական հավաքներին, թե՛ ժամկետային եւ թե՛ պայմանագրային զինծառայությանը:

Հատուկ ուշադրություն ենք դարձնում ռազմական կրթությանը եւ սպայական աշխատանքի գրավչության մեծացմանը, եւ այս առումով, ուզում ենք ընդգծել Ռազմական համալսարանի՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի սպայական ծառայությունը սկսող շրջանավարտների բնակարանային ապահովման, ինչպես նաեւ Ակադեմիական քաղաքում Սպայական ավագ դպրոցի եւ Սպայական համալսարանի հիմնադրման նախագծերը: Հայաստանի Հանրապետության բանակի ինտելեկտուալ խորությունն ապահովելը մարտունակության բարձրացման առաջնային բաղադրիչ է եւ մենք պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնենք նաեւ դրան:

Հարգելի՛ ներկաներ, Մենք պետք է վերանայենք նաեւ անվտանգության մասին մեր ռազմավարական պատկերացումները:

Պետք է բարձր եւ ուղիղ խոստովանել, որ անվտանգության եւ անվտանգային համակարգերի, դրանց գործունակության բանաձեւերի մասին մեզանում արմատացած պատկերացումներն աղետալի խաղ խաղացին մեր գլխին եւ Հայաստանի Հանրապետության համար չկա այլ տարբերակ, քան անվտանգային հարաբերությունների դիվերսիֆիկացումը:

Եվ մենք գնում ենք այդ ճանապարհով: Նոր եւ ժամանակակից սպառազինության եւ տեխնիկայի ձեռքբերման ճանապարհով ենք գնում, եւ վերջին տարիներին Կառավարությունը մի քանի միլիարդ դոլարի գեներ-զինամթերք ձեռք բերելու պայմանագրեր է կնքել:

Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրն աննախադեպ՝ մի քանի հարյուր միլիոն դոլարի պատվեր ունի Հայաստանի կառավարությունից, եւ, իհարկե, շարունակելու ենք ներդրումներ անել ռազմարդյունաբերական համալիրում: զուգահեռ ավելացնելով նաեւ գիտության եւ կրթության ֆինանսավորումը:

Այս ձեռքբերումների ու ներդրումների անելու հնարավորության համար ուզում ենք կրկին ու կրկին շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության բոլոր օրինապահ հարկ վճարողներին, որոնք գործնականում են իրագործում 2018 թվականին մեր կողմից առաջարկված «հարստացիք եւ հարստացրու եւ կարգախոսը: Եվ պիտի արձանագրենք, որ



2023 թվականի բյուջեի հարկային եկամուտները, արդեն իսկ փաստացի կատարված, 2017 թվականի բյուջեի եկամուտների համեմատ ավելի են եղել շուրջ 2,5 միլիարդ դոլարով: Եվ ահա այս գումարներով է նաեւ իրականացվում բանակի, զինված ուժերի բարեփոխումը:

Բանակը բարեփոխելը, ուժեղ եւ մարտունակ բանակ ունենալը յուրաքանչյուր երկրի ինքնիշխան իրավունքն է եւ մենք շարունակելու ենք գնալ այս ճանապարհով: Ուժեղ եւ մարտունակ բանակը Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, անկախությունն ապահովող կարեւորագույն գործոններից է, բայց ոչ միակ գործոնը: Անվտանգության ապահովման տեսանկյունից առաջնային երկու գործոն են պիտի ընդգծեն՝ արտաքին հարաբերությունները եւ վարվող քաղաքականությունների լեգիտիմությունը՝ միջազգային իրավունքի տեսակետից:

Լեգիտիմությունն, ըստ այդմ, Հայաստանի արտաքին անվտանգության ապահովման կարեւորագույն գործոն պիտի լինի: Ի՞նչ նկատի ունեն: Այն, որ Հայաստանի Հանրապետությունն ինքն իրեն պետք է նույնականացնի այն տարածքի հետ, որի վրա են ճանաչվել է միջազգային հանրության կողմից: Այն է՝ Հայկական ԽՍՀ տարածքը, որը նույնական է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի հետ: Մենք պետք է հստակ եւ աներկբա արձանագրենք, որ որեւէ այլ տարածքի նկատմամբ որեւէ հավակնություն չունենք եւ չենք ունենալու, եւ սա պետք է դառնա Հայաստանի արտաքին անվտանգության ապահովման ռազմավարական հիմքը:

Հայաստանի Հանրապետության մեծարժոյն նախագահ, Հարգելի՛ ներկաներ,

Չեմ կարող չանդրադառնալ նաեւ տարբեր կողմերից եւ, մասնավորապես, Ադրբեջանից հնչող մի շարք ագրեսիվ հայտարարությունների՝ կապված Հայաստանի Հանրապետության բանակի բարեփոխումների, սպառազինության եւ տեխնիկայի ձեռքբերման հետ: Արդեն սասցի, որ ուժեղ եւ մարտունակ բանակ ունենալը յուրաքանչյուր երկրի ինքնիշխան իրավունքն է եւ որեւէ մեկը չի կարող կասկածի տակ դնել մեր այդ իրավունքը: Եթե որեւէ մեկը կասկածի տակ է դնում մեր այդ իրավունքը՝ կասկածի տակ է դնում մեր գոյության իրավունքը: Այս պարագայում մեզ այլ բան չի մնա, քան բոլոր հնարավոր եւ անհնար միջոցներով պաշտպանել մեր պետականությունը, մեր անկախությունը, մեր տարածքային ամբողջականությունը:

Կրկին արձանագրում ենք, որ Հայաստանի Հանրապետությունն իր ինքնիշխան տարածքից բացի՝ որեւէ այլ տարած-

քի նկատմամբ հավակնություն չունի, եւ որեւէ մեկը չպետք է հավակնություն ունենա Հայաստանի Հանրապետության որեւէ տարածքի նկատմամբ: Ինչպես ասել են՝ մենք պատրաստ ենք տալ նման երաշխիքներ, երկարատես եւ անշրջելի երաշխիքներ, բայց նույնպիսի երաշխիքներ ակնկալում ենք ուրիշներից:

Մենք պատրաստ ենք գնալ այդ ճանապարհով, եւ բացի դա՝ անվտանգության երաշխիքների մի քանի մեխանիզմներ ենք առաջարկել Ադրբեջանին: Օրինակ՝ գործերի հայելային հետքաշում Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ ադմինիստրատիվ սահմանի նկատմամբ: Այդ սահմանը 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրով վեր է ածվել պետական սահմանի եւ Հայաստանն ու Ադրբեջանը 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում պայմանավորվել են, որ այդ հենքի վրա ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը: Չորրորդի հայելային հետքաշումը հնարավորություն կտա, որ Ադրբեջանական ԽՍՀ բոլոր տարածքները լինեն Ադրբեջանի, իսկ Հայկական ԽՍՀ բոլոր տարածքները Հայաստանի վերահսկողության ներքո:

Մենք նաեւ սահմանի դեմիլիտարիզացիա, այսինքն՝ ապառազականացում ենք առաջարկել Ադրբեջանին: Նաեւ սպառազինությունների փոխադարձ վերահսկման մեխանիզմ, նաեւ չհարձակման մասին պայմանագրի ստորագրում, եթե կպարզվի, որ խաղաղության պայմանագրի ստորագրումը սպասվածից ավելի երկար ժամանակ է պահանջվում:

Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ է խաղաղության օրակարգին եւ չի շեղվելու այդ օրակարգից:

Հայաստանի Հանրապետության մեծարժոյն նախագահ, Հարգելի՛ ներկաներ,

Անփոփելիվ խոսքս ուզում են շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության բանակի բոլոր այն զինծառայողներին, ովքեր անբասիր են, պրոֆեսիոնալ ու հավատարիմ Հայաստանի Հանրապետությանը տված իրենց երդումին:

Փառք նահատակներին եւ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Վարչապետ Փաշինյանը, Բանակի օրվա առթիվ, հայրենիքի անվտանգության եւ պաշտպանության գործում ներդրած ավանդի համար ՀՀ պաշտպանության նախարարության մի խումբ զինծառայողների պարգևատրել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Միջոցառման ընթացքում ելույթով հանդես է եկել նաեւ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

Աշխարհի հետ

Քննարկվել են կրթության եւ մշակույթի ոլորտներում հայ-բրիտանական համագործակցության մի շարք հարցեր

Նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ ՅուԼԻԱՍԻԱԿԻ Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Զոն Գալագերին եւ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Ադդե Յովասափյանին: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է հյուրերին եւ նշել, որ անցած տարիների հաջողված համագործակցությունը լավագույն հիմք է՝ այն շարունակելու նաեւ այս եւ հետագա տարիներին:

Նախարարը հատկապես կարեւորել է ԿԳՄՍ նախարարության արդյունավետ համագործակցությունը Բրիտանական խորհրդի հետ՝ որպէս հաջողված օրինակներ նշելով անգլերենի ուսուցիչների վերապատրաստման եւ ուսուցման որակի ապահովման ուղղված աշակցությունը, դպրոցներում անգլերենի ակունքների ստեղծման ծրագիրը: «Առանձնահատուկ կարեւոր են Բրիտանական խորհրդի դերը եւ աշակցությունն անգլերենի ուսուցման մեթոդաբանության մշակման եւ ուսուցիչների վերապատրաստման հարցերում: Կարող ենք արձանագրել, որ այս աշակցությամբ էականորեն բարելավվել են ուսուցիչների դա-

սավանդման հմտությունները»:

Նշվել է, որ ծրագրի շրջանակում նախատեսված են այլ միջոցառումներ եւս, որոնք կիրականացվեն ընթացիկ տարում:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են գիտակրթական համատեղ ծրագրերի իրականացումը, որը կարող է նպաստել գիտության եւ կրթության ոլորտներում համագործակցության նոր հնարավորությունների ստեղծմանը: Անդրադարձ է եղել ՀՀ-ում ընթացող կրթական եւ մշակութային բարեփոխումներին՝ վերահաստատելով պատրաստակամությունը ոլորտային ռազմավարությունների իրականացման հարցում:

Նախարար Ժաննա Անդրեասյանը հատկապես ընդգծել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հին ծեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի եւ Բրիտանական գրադարանի միջեւ նախատեսվող համագործակցության կարեւորությունը՝ որպէս հաջողված փորձ նախանշելով Հայաստանի պատմության թանգարանի եւ Բրիտանական թանգարանի համագործակցությունը:

Կողմերն անդրադարձել են «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում Մեծ Բրիտանիայի եւ ՅուԼԻԱՍԻԱԿԻ Իռլանդիայի Միացյալ Թագավորության հետ կապերի



հետագա ընդլայնմանը: Մասնավորապես քննարկվել է ակադեմիական քաղաքի կրթական կլաստերի կայացման հարցում Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) հետ համագործակցային կապերի հաստատման հարցը: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը կարեւորել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի եւ Լոնդոնի արվեստների համալսարանի միջեւ համագործակցու-

թյան մասին» փոխընթաց հուշագիրը, որն ուղղված է ակադեմիական քաղաքի Արվեստների կլաստերի ձեւավորման համար առաջարկությունների եւ գործիքների տրամադրման, կրթական ծրագրերի մշակման, որակի ստուգման եւ ինստիտուցիոնալ կառավարման բնագավառներում աշակցությանը:

Հանդիպման ընթացքում նախարարն ու դեսպանը քննարկել են նաեւ համագործակցության ընդլայնման հնարավորություններին առնչվող մի շարք այլ հարցեր:

Ամփոփումներ

Արհեստի եւ արվեստի միջեւ

2023 թվականը լի էր տարատեսակ միջոցառումներով նաեւ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում: Այս բնագավառի նկատմամբ կրթական գերատեսչության առանձնակի ուշադրության յուրատեսակ հանրագումարն էր «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որ արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը եւ ներկայացվել Ազգային ժողով: Մինչ օրենքի նախագծի ներկայացված տարբերակի ձեւավորումը, տեղի են ունեցել բազմաթիվ վերլուծություններ, քննարկումներ, միջազգային եւ տեղական արդյունավետ փորձի ուսումնասիրություններ... Դրանց պարբերաբար անդրադարձել է նաեւ «Կրթություն» շաբաթաթերթը:

Մեզանում նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի զարգացման գործում որոշակի ներդրում ունեն նաեւ համապատասխան հասարակական կազմակերպությունները: «Քիզնես եւ կրթություն. գործընկերություն» հիմնադրամը «Քիզնես եւ կրթություն» ընկերակցության հետ համատեղ գերմանացի գործընկերների հետ արդյունավետ համագործակցություն է ապահովել, այն առանձնապես ընդլայնելով վերջին տարիներին: Փորձի փոխանակման փայլուն հնարավորություններ են ստեղծվել ոչ միայն նախաձեռնող կազմակերպությունների փորձագետների, այլեւ հայաստանյան մի շարք կրթօջախների ներկայացուցիչների համար, ովքեր պարբերաբար եղել են Գերմանիայում, տեղում ծանոթացել մասնագիտական կրթության եւ ուսուցման, մասնագիտական կողմնորոշման կազմակերպման գերմանական մեթոդներին ու եղանակներին:

Արդյունավետ համագործակցության յուրատեսակ ամփոփումն էր անցած տարվա վերջում հրավիրված գիտակրթական կոնֆերանսը, որ կրում էր «Մասնագիտական կրթությունը եւ կողմնորոշումը՝ շինարարական ոլորտի մասնագիտությունների օրինակով» խորագիրը:



Միջոցառումը կայացավ Երեւանի Գագիկ Ստեփանյանի անվան հ.135 հիմնական դպրոցում: Նշենք, որ այս կրթօջախը, որ, ի դեպ, սովորողների համար ապահովում է հրաշալի շենքային պայմաններ եւ բարենպաստ մթնոլորտ, կոնֆերանսի մասնակիցների համար եւս ապահովել էր համահունչ միջավայր:

«Քիզնես եւ կրթություն. գործընկերություն» հիմնադրամի եւ «Քիզնես եւ կրթություն» ընկերակցության հիմնադիր նախագահ Մարինե Ժամկոչյանը, ով նաեւ կոնֆերանսի առանցքը կազմող «Մասնագիտական կրթություն եւ կողմնորոշում» ծրագրի ղեկավարն է, ներկայացրեց կոնֆերանսի հրավիրման հիմնական շարժառիթները, համատեղ իրականացվող ծրագրի բովանդակությունն ու արդյունքները:

Կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց եւ խնդր առարկա ծրագիրը օրինակելի գնահատեց ՀՀ ԿԳՄՍ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյանը:

Հիմնական զեկուցողներն էին Լայպցիգի արհեստագործական պալատի «Մասնագիտական կրթություն եւ կողմնորոշում» ծրագրի ղեկավար Ռուտե Ֆոլկը եւ Լայպցի-



գի արհեստագործական պալատի փորձագետ Կերստին Չալգեն:

Ելույթներով հանդես եկան ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջին մասնագիտական կրթության քոլեջի տնօրեն Անահիտ Յովհաննիսյանը, Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի տնօրեն Կարինե Միքայելյանը, Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջի տնօրեն Քրիստինե Աբրահամյանը, Երեւանի հ.107 միջնակարգ դպրոցի տնօրեն Աննա Աբելյանը, նույն դպրոցի ուսուցչուհի Հասմիկ Ասիրյանը, Երեւանի հ.4 արհեստագործական պետական ուսումնարանի պրակտիկայի ղեկավար Լիլիթ Վիրաբյանը, Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջի դասախոս Գայանե Մայիլյանը: Նրանք պատմեցին Գերմանիա կատարած այցելի ընթացքում ստացած տպավորությունների մասին, հակիրճ ներկայացրին մասնագիտական կրթության եւ ուսուցման, ինչպես նաեւ մասնագիտական կողմնորոշման կազմակերպման գերմանական փորձի առանձնահատկությունները ուշադրություն դարձնելով հատկապես երկու հանգամանքի վրա. Գերմանիայում մասնագիտական կողմնորոշման դասընթացներ

կազմակերպում են դեռեւս նախակրթականներում, եւ նաեւ՝ բոլոր սովորողներին տրվում են մասնագիտական կողմնորոշման անձնագրեր, որտեղ գրանցվում են տվյալ անձի ունեցած բոլոր համապատասխան մասնակցությունները եւ գնահատականները... Բնականաբար, անձնագիրը կարելու էր կատարում աշխատանքի ընդունվելիս:

Կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց նաեւ ծրագրի հովանավոր «Կնաուֆ Արմենիա» ՍՊԸ տնօրեն, սեյմակալու շինարարության մագիստրոս Գագիկ Ջրբաշյանը: Վերջինս, ընկերությանն ուղղված երախտագիտության խոսքերին ի պատասխան, խոստացավ այսուհետ եւս շարունակել աջակցել ոչ միայն այս ծրագրի մասնակից, այլեւ, ընդհանրապես, հայաստանյան մյուս ուսումնական հաստատություններին եւս:

Կոնֆերանսը եզրափակվեց վարպետության դաս-գործնական աշխատանքով. մասնակից ուսումնական հաստատությունների սաները, տեղում ցուցադրելով իրենց ստացած գիտելիքներն ու հմտությունները, պատրաստեցին օրվա խորհրդին համահունչ հուշանվերներ եւ նվիրեցին կոնֆերանսի մասնակիցներին:

Լ. ԳԱԼՍՏՅԱՆ


Հայրենագրության նոր որակ

սկիզբը՝ նախորդ համարում

«Սիրո ճանապարհ» (1954) ժողովածուն ի մի է բերում առաջին գրքի գրողական տարիներից հետո մինչև անհատի պաշտամունքի նախաշեմն ընկած գործերը: Անհատի պաշտամունքի հաղթահարումը նրան նոր ճանապարհի պիտի դուրս բերեր «Նորից քեզ հետ» գրքում: «Սիրո ճանապարհ»-ը ժամանակի համար համարձակ վերնագիր էր: Սերը՝ անձ, անհատականություն է ենթադրում, իսկ ժամանակը դեռևս պատրաստ չէր անձնական քննարկության, պահանջը սոցիալիստական քննարկությունն էր: Եվ ահա «Սիրո ճանապարհ», որ բերում էր ոչ միայն սեր, այլև հայրենիք և քաղաքացիական դիրքորոշում: Կա նաև «Սիրո ճանապարհ» շարք՝ պատանեկան սիրո ենթաշարքերով՝ «Ամենուկներ մանկությունից», «Պատանության ծաղիկներ», «Երիտասարդ սիրտը», որ ամբողջությամբ ստեղծում են միասնական պոեմ: Գրքում դեռևս պատերազմի հիշողությունն է՝ «Պատերազմ և խաղաղություն»: Հանրային միտքն ազատագրվել էր գաղափարական որոշ կաշկանդումներից, երբ չէր կարելի խոսել ոչ միայն գերի ընկնելու մասին, որոնց աշխատանք չէին տալիս և աքսորում էին, այլև նահանջի: Պետք էր գրել միայն հաղթանակի և համաշխարհային սոցիալիզմի մասին: «Փառքի պատվանդան»-ը այդ նահանջն է, որ, իհարկե, պետք է ավարտվեր հաղթանակ գրողով: Ցավի տնքոցը լավում է նաև «Սպիներ» շարքում: մայրը որդու համար գուլպա է գործում, իսկ պատերազմը տարել է նրա ոտքը, զինվորը զոհվել է, բայց անգամ սեւ թուղթը չկա, որովհետև նրա հետ մեկտեղ զոհվել է նաև գնդի գրագիրը, հետո պատերազմում ընկածներն են՝ «Ամեն մեկը՝ մի տան ծրագ, // ... // Ամեն մեկը՝ անգիր մի վեպ» (1, 87): Այս արձանագրումներից փորձում է խորանալ, բայց մնում է միայն ցանկությունը, որովհետև տակը ողբերգությունն էր՝ ոչ միայն ընկածների, այլևս պարոնների: Այսպիսով բանը կորուստն է. մի ամբողջ սերունդ են այն երեխաները, ովքեր այդպես էլ իրենց հայրերին չտեսան: Երկրի պատմությունն է գրում՝ փորձելով գաղափարական ճառից անցնել մարդկային ճակատագրերի: Այդ իսկ պատճառով գեղեցիկ է նաև 1946-1947 թթ. գրած և առաջին գրքից դուրս մնացած գործեր, որ նշանակում է՝ չնոսանալ անցյալը:

Չարենցի ռադիոպոեմներից շուրջ երեք տասնամյակ հետո «Դադիորդներին չի առաջ» Սեւակը լսում է քաղաքական լուրեր: «Ստույն է Մոսկվան» ազդարարում է ռադիոընդունիչը, և լուրերը լսող բանաստեղծը վճռում է. «Հասկանում են. // Հիմա // Ապրում ենք մի դարում, // Երբ ուղիներն ամեն կոմունիզմ են տանում, // Այդ մասին են ահա // Բոլոր կայաններն ու կետերը բարբառում // Ոմանք սարսփափախ, իրերն անեծք, // Ոմանք ուրախությամբ՝ որպես հարցադրում» (1, 66): Սոցիալիստական քաղաքացիականության այս երանգներն ունեն նաև մյուս գործերը՝ «Օրվա երգը», «Ընկերուհու», «Աշխարհագրության դասին», «Խաղաղություն», «Դարակնիսի երգը»: Աշխարհի քաղաքական բախտն է՝ այսպիսի հարցումով. «Արդեն կեսն է դարի: // Հիմա աշխարհին // Ուրիշ մի հարց է լրջորեն հուզում. // Այս ահեղ դարը ինչո՞ւ ավարտել» (1, 79): Դարի պես կիսված էին Գերմանիան, Կորեան, և եթե անգամ մի օր պետք է միավորվեին, ապա միմիայն խորհրդային դրոշի ներքո: Ամեն ինչ «Սեծ» հայրենիքի չափով էր՝ Մոսկվան աշխարհի կենտրոն, շրջապատված 15 հանրապետություններով: Մի շարքը վերնագրված է «Մոսկվայից». մոսկովյան երգեր են, հաղթող երկրի մայրաքաղաքի գովքն է՝ որպես ամեն ինչի կենտրոն: Սրանց գոյությունը ժամանակի պահանջն էր՝ միջակայքում մի կերպ տեղ տալու «Հայրենիքի» այս տողերին. «Բառեր չկան կարծես քեզ երգե-

լու համար, // Եվ ես որդու նման անվանում եմ քեզ «մայր»: // «Հարազատ» եմ ասում եւ այնուհետ լռում. // Սիրող սիրտն է այդպես խոսքը շուտ սպառում: // Իսկ թե ոնց եմ սիրում՝ դու գիտենաս պիտի, // Բայց քեզանից առաջ՝ քո թշնամի՞ն գիտի» (1, 77): Սա էս «Սեծ» հայրենիքն է՝ ԽՍՀՄ-ը, բայց նաև այստեղից է սկսվում դեպի փոքր հայրենիք տանող ճանապարհը: Այդ ճանապարհի առաջին հանգրվանը «Սովետական իմ Հայաստան» շարքն է: «Սեծ»-ի գովքը հանուն այս «Փոքր»-ի էր: Դարձյալ գովք է ու ներքո: «Դու փոքր ես եղել // Եղել ես մի բուռ», ասում ու «փոքր»-ն անընդհատ շեշտում է, որպեսզի ընդգծի նրա մեծագործությունները: Այս պարզ հակադրությամբ նա տրամաբանական ընթացք է տալիս մտքին, ըստ այդմ՝ «Հայաստանը ծանր կանգնած է այն մեծ մեծարին» և ծանր է ոչ թե արկերով, «գեների հարկերով», «կրքով կատաղի», «արցունքով աղի», «Այլ երջանկության մշտավառ հրով, // Խաղաղ ծերությանը, շիկնանքով սիրո»: Եվ եզրփակիչ երկտողը. «Այն մեծ մեծարին, որտեղ սպազան // Ու պատմությունն են դարձել կռաբար» (1, 102): Թե «Փոքր»-ը «Սեծ»-ի հետ հակադրելու, թե հայոց աշխարհը խաղողի դիմացկուն տունկի նմանեցնելու համեմատությունը տարածված էր ժամանակի պոեզիայում: Սեւակն իր հերթին գրում է. «Դու քո խաղողի նման ես եղել. // Կոտրատել են քեզ, հողի մեջ թաղել, // Բայց երբ անցել են ցրտերը ծմռան, // Հողի մեջ թաղված վագերիդ նման, // Դու նոր մի ուժով նորից ընծյուղել...»: Ժամանակի համար ընդհանուր է նաև հայ ժողովրդի ծանր անցյալ - պայծառ ներկա հակադրությունը և ներշնչված բացականչությունը. «Ինչ լավ է, որ դու աշխարհի մեջ կաս, // ... // Ինչ լավ է, որ դու լոկ պատմությունն չես»: Դիմում է անձնավորման. «Ես Սովետական քաղաքացի եմ, // Ես՝ Սովետական Հայաստանը»: Ուրվագծվում է նաև Հայաստանի բնապատկերը՝ ինքնամոռաց ջրվեժներ, անասկ ձորեր ու մռայլ ծերպեր, կածաններ՝ որպես «անջուր առու», ծյունապատ սարեր և անցյալ ու ապագան միավորող այսպիսի եզրափակում. «Մեր հին պատմությունը մի փառահեղ վիպերգ - // Հյուսված կրկներգերով սխրանքների, ցավի, // Ու մեր ներկան՝ իբրեւ եւ՝ անցյալի վերջերգ, // Եվ նախերգանք վաղվա, ապագայի» (1, 105): Հաջորդում է «Երեւան» երգաշարը: Ինչո՞ւ Մոսկվային նվիրված երգաշար կլինի, երեւանին՝ ոչ, այն դեպքում, երբ դեռ Չարենցն է երգել՝ «Ես սիրում եմ քեզ, երեւան»: Առաջինում կառուցվող երեւանն է, որ ամեն վայրկյան փոխվում է «Արբուճախաս պատանու կեն», երկրորդում՝ երեւանն ապրելու, ամեն վայրկյան նրանով հիանալու երջանկությունը. «Սա պատմելու բան չէ, // Սա զգալու բան է»: Հին հակադրությամբ երեւանը դառնում է քանակ. «Երեւանն է շողում իբրեւ իսկա մագնիս, // Իր կողերից կախած բազում նոր ավաններ՝ Փոքրիկ երեւաններ // ... // Իսկ այդ ավանների ամունները խոսում. // Նոր Կիլիկիան ահա, ահա Արաբկիրը, // Միա Նոր Արեշը, Նոր Ջեթունը» (1, 110): «Ճարտարապետական ցուցահանդեսում» մայրաքաղաքի ապագա կառույցների մանրակերտներն են. «Շունչ ես քաշում ազատորեն - կարծես կուրծքը երգ է գրում // Ուրիշ մի երգ՝ ազատ չափով, առանց ճշիչ բռնահանգի» (1, 113): Կուրծքն ուռչում է բերկրանքից: Հաջորդում է «Հանրապետության հասակակիցները» ներքողը, որ 30-ամյա երկրի և այն կառուցողների ջանքն է՝ դարձյալ անցյալի հակադրությամբ՝ «Բեղուն չէր այն տարին» կրկնաբերությամբ՝ «Սողեգնում էր սովը ու ժամտախտը դեղին», բայց ամեն ինչ նոր հուն է մտնում, «Երբ Նեւայի նման ալեկոծվեց Ջանգուն, // Մասինս արձագանքեց «Ավորայի» գարկին»: Այս ամենով Սեւակն առանձնապես չէր տարբերվում իր սերնդակիցներ Էմինից ու Կասյուտիկյանից. իր ծայրն էր, բայց շատ



նման նրանց: Ժամանակը համահարթել էր բոլորին: Եվ ահա եկավ մի նոր ժամանակ, որ ավելի նպաստեց նրա անհատականության բացահայտմանը:

«Նորից քեզ հետ»-ի (1957) գաղափարական շրջադարձը պայմանավորված է անհատի պաշտամունքի հաղթահարմամբ և քննադատությամբ: Կուսակցական գաղափարական վերահսկողությունը չվերացավ, բայց նվազեց: 1957-ին գրած այս տարիների արձագանքների մեջ («Վախենում եմ», «Քրտնում եմ») գուշակաբան է. «Վախենում եմ // Սին մտքերի ճարճատումից, // Հին մտքերի աղճատումից, // Նոր մտքերի կրճատումից... // ... // Սարսափում եմ վերադարձող // Քաղաքակիրթ միջնադարից» (6, 46), «Սակայն կյանքում շատ ավելի ես քրտնում եմ ուրիշի՝ տեղ, // Թեպետ գուցե չի երեւում իմ քրտինքի աղի շիթը: // Ուրիշի՝ տեղ, // Երբ որ մի բան մտածում են, // Բայց ասում են բոլորովին ուրիշ մի բան // Եվ չեն զգում, որ այդպես է հասնում ահա // Այն դանակի բթացումը, // Որով մարդիկ այգու նման կյանքն են էտում: // Ուրիշի՝ տեղ, // Երբ նրանք չեն կռադատում - // Կատարում են լոկ հրաման: // Ասես ուսին գլուխ չունեն, // Այլ շուռ տված մի ջրաման...» (6, 50): Այս տեսակետից առանձնահատուկ է ԽՄԿԿ Կենտկոմի 22-րդ համագումարում անհատի պաշտամունքի քննադատությունից հետո Սեւակի հայտնած «Շնորհակալություն»-ը. «Շնորհակալություն»-ը «հայր» բառի կողմից, // Որ յոթ հոլովով խոշտանգվում էր միշտ // Մակդիր դառնալով // Մեր արդար, անմեղ բազում հայրերին, // Անլուր լլկողի անվանը ծանոթ. // Նաև ապշահար արեւի կողմից, // Որ պարտավոր էր դառնալ անակա, // Եվ շքանշան մի կրծքի վրա, // Ուր մարդկային դարձել էր կարծես սառուցյալ բեւեռ - // հալոցք չէր տալիս արեւը մույնիսկ» (90, 1961, թիվ 45): Ստեղծագործական առաջին շրջանում՝ նկատի ունենալով առաջին երեք գրքերը և դրանց հրատարակության ժամանակը (1946-1954)՝ Սեւակը նման է խմբեգրային երգիչի. ծայրը իրենն է, բայց երաժշտությունն ու կատարումը՝ խմբինը, որովհետև մույն գաղափարական փայտիկն էր խմբավար ժամանակի ձեռքին: Նույնն ու ընդհանուր են եւ՝ պատերազմի, եւ՝ սոցիալիստական հայրենասիրության, եւ՝ քաղաքացիական հիմնադրույթներն ու գեղարվեստական արժարժանները: 1956-ից հետո և հատկապես 1957-ի խմբեգր փոխվեց մեներգի. նախկին երգանքը դառնում է իրականություն, «Որի համար չափ է երջանկությամբ լեցուն սրտի տրոփյունը, // Եվ որը հանգ ունի - ծիծաղի պես» (1, 160): Այս ազատ տարբերքը խորհրդային պատգամով նաև ռոմանտիկական հովեր է առնում. «Ազնիվ եղիր ամեն ինչում - ո՞վ է կյանքում սովից մեռել: // Ե՛տի համար արտոջ կա - ստի հանդեպ ինչո՞ւ լռել» (1, 173): Սեւակն ասես տարված է. նա լավ գիտեր, որ կյանքում սովից շատերն են մեռել՝ հենց թեկուզ 1915-ին, կոլեկտի-

վացման տարիներին, պատերազմի օրերին՝ գերության մեջ ու թիկունքում: Եվ մի՞թե չգիտեր, որ հենց ճշտի համար են մարդկանց հալածել ու աքսորել միջնադարյան հավատաքննության ժամանակ, Պուշկինի ու Լերմոնտովի օրերում, 1937 թվականին, հենց իր իսկ աչքի առաջ (Պաստերնակ, Սոլժենիցին, Բորոսկի, Վիսցոսկի): Ի վերջո հերքը պիտի հասներ նաև իրեն: Սեւակի շրջադարձի գեղարվեստական ազդարարը սա է. Ես լեռներից իջնում եմ ցած՝ Պոտորությունը պարզելով, Ինչ-որ չափով հարստացած, Ինչ-որ չափով նվազելով:

Ելման գետերն իմ ջահելության Սահանքները իր փոքրիկուն Օրիսարկուն է մի մեղմության, Որ խոսքն է պահում խորքում:

Դեմքս դաշտն է, հովիտն արծակ, Կանաչապատ են ծառայել, Չուր վատնումն է արդեն հանցանք, Աղմկելը՝ ծիծաղելի (1, 151):

Գիրքը բացվում է «Ծուխ ծխանի» շարքով և շարքին ընթացք տվող «Հայաստան» ներքողով՝ կառուցված երկրի պատկերը կերտող բնորոշիչներով: Անկա են ժողովրդական պարզ երգերին բնորոշ մակդիրներ, որոնք աստիճանական զարգացմամբ վերածվում են պատկերների: «Դու» դիմում է հայրենիքին, և կյանք է առնում հերթական տողը: Մուտքի առաջին չորս տողերը դառնում են կրկներգ. «Իմ քաղցրանունն, // Իմ բարձրանուն, // Իմ տառապանք, // Իմ փառապանք: // Հինքի մեջ դու ալեհեր, // Նորերի մեջ նոր ու ջահել, // Դու՝ խաղողի խչմարված վագ // Վշտերդ՝ ջուր, ինքը՝ ավազ... // ... // Արդարության ահեղ առյուծ, // Սրի պատյան, // Սիրո մատյան - // Միշտ հին ու նոր իմ Հայաստան» (1, 152-153): Գրել է 1950-ին, առաջին անգամ ակնարկում է կոտորածների մասին, հիշեցնում արդար դատաստանը՝ այդ իսկ պատճառով չէր կարող գեղեցիկ նախորդ՝ «Սիրո ճանապարհ» գրքում: Այս ներքողով ամենից ավելի ոգեշնչվածներից մեկը Մահարին էր, համեմատում է անգամ Չարենցի «Ես իմ անուշ...»-ի հետ, համարում «Մեր պոեզիայի փայլուն ու մնացած էջերից մեկը» և համեմատարարում գեղեցիկ դասագրքերում (ԳԹ, 1958, թիվ 17, 27 ապրիլ): Ավելացնենք՝ որպես ներքողներ են գրված շարքի այլ գործեր՝ «Իմ ժողովրդին», «Դու այսպես ես եղել», «Հայտար եմ ես»...

Պատկերաշարի տրամաբանական առանցքը անցյալ-ներկա հակադրությունն է. «Չարնանքով եմ ես միշտ նայում քո անցյալին, // Բո անցյալին եւ տանջալից, եւ պանծալի»: Թե ինչո՞ւ գարնանքով, բացահայտվում է հայոց պատմական հոգեկերտվածքը ներկայցնող պատկերներում՝ դառնալով ժողովրդի անցած ճանապարհի գեղարվեստական տարբերություն:



Հայրենագության նոր որակ

սկզբը՝ էջ 8

Այս տեսակետից շատ բնութագրական է «Դու այսպես ես եղել» վերնագիրը, որով առարկայական պատկերաշարով Հայաստանի տարեգրությունն է՝ նման միջնադարի ժամանակագրություններին: Գլխավոր ազգակը հպարտությունն է, որով ժողովուրդը պիտի դարձաներ իր տրորված արժանապատվությունը, որ գալիս էր 1915-ի, 1937-ի, 1949-ի չափացած վերջերից: Ժողովրդի վերականգնվող գիտակցությունը հոգեբանորեն իրեն վերագտնելու ձևեր էր որոնում, ուստի լացուկոծին պետք էր հակադրել բարձրացող հպարտության ալիքը. «Հպարտ եմ ես քո անցյալի // Մաքառունով ու պայքարով, // Տոկունությամբ, կամքով համար: // Հպարտ եմ ես քո պանծալի, // Քո լուսավոր այս ներկայով, // Որ ... գալիք է այլոց համար» (1, 157): Հպարտությունն ընդարձակում է նաև պատերազմական նյութի շրջանակները, աչքի առաջ մահվան դեմոնից գնացած ու անանուն մնացած սերունդն է:

«Ծուխ ծխանի»-ի մի շարք գործեր գրել է Մոսկվայում ապրած տարիներին: Հայրենիքից հեռու էր, կարոտը կեղեքում էր: Այդ ապրումներից է ծնվել «Անքնություն»-ը (1956), որ կարոտի խելոգող զգացողություն է: Այլ կերպ կարելի է վերնագրել «Կարոտի անքնություն», որ «Հանդիպում» բերթվածից հետո շարունակվում է «Կարոտ»-ով: Կարոտը տարածվում է պետական սահմանից այն կողմ, եւ համոզմուն է Մասիսներին ասել «գերված», որովհոռեւ գրում էր Ստամբուլում գերված թուրք ազատամիտ բանաստեղծ Նազիմ Յիլմազի մասին, ինչն առիթ է հիշելու Պոլիսը, Պարոնյանին, Դուրյանին, Սեծարենցին Կոմիտասին, Վարուժանին, Սիամանթոյին, վերապրելու ցեղասպանությունը եւ արդեն ավելի խորությամբ գրելու հայոց ողբերգության մասին. «Եվ իմ պառավ մորը, որ ոչ մեկը չունի յոթ եղբորից, // Ինչպե՞ս հարկադրել, որ «Համիդ» լսելիս չհասկանա հրեշ... // Մեր գոհերի արյան հատուցումն է անցնում որդուն հորից, // Այդ թվերին ծնված հազարավոր որբեր գո՛ւր չեն կոչվել «Կրեճ»»: Ահա թուրք գրողի առիթով արժարձում է ինչպես ազատության հարցեր, այնպես եւ ծխացնում հայոց ցավը՝ հասնելով վրեժի արթնացման, ինչն արդեն նորություն էր: Իսկ հիշյալ «Կարոտ»-ն արդեն տանում է դեպի ծննդավայր, այնտեղ, «Ուր մի տուն կա, տան մեջ մի մայր... եւ ուր մի օր ծնվել եմ ես».

«Կա մի աշխարհ մեր աշխարհում՝ ինձ հարազատ, ձեզ անձանթ, // Ուր էլ լինեմ՝ կանչում է նա հազար ծայրով ու սրտագին, // Ապրում է նա իմ հոգու մեջ իբրեւ անբառ, համր կարոտ, // Իբրեւ լեզունդ դեռ չգրված, իբրեւ մի երգ անսրբագիր» (1, 165):

«Ծուխ ծխանի»-ի գործերը, գրված 1946-1956-ին, հաջորդում են՝ պահպանելով ներքին բովանդակային կապը: Նշում ենք՝ ասելու, որ «Կարոտ»-ին հաջորդում է «Մայր ու որդի»-ն՝ մոր կերպարի արթնագործումով, իսկ սրան էլ՝ «Մոր ձեռքերը», որ հասնում է հայրենիք-ծնող ներդաշնակ միասնության: Հայրենասպառումի ասքը զարգանում է դրվագ առ դրվագ: Հաջորդում է «Շա՛տ բան է պետք արդյոք»՝ հռետորական հարցումը՝ այսպիսի պատասխանով՝ երջանկությունը լեռան լանջի հայրենի տունն է, տանը մեծացող երեխան: Տուն, մայր, գավակ՝ իրական արժեքներ, որոնց մեջ կյանքի գեղեցկությունն է՝ «Որդուս» կտակով, որ հոգեկան ու բարոյական արժեքների ժառանգորդություն է. հայրենիքը շարունակում է կյանքի դասերը: Ծխանի ծուխը ծխացնելու պատգամով ասում է. «Հանուն գալիք վառ խարոյկի ես պատրաստ եմ այսօր ծխալ», հպարտ լինել, բայց ոչ գոռոզ «...դատարկ մարդն է գոռոզանուն, // Հայրդ խելոք ու տխմարին դրանով էր զանազանում»: Արժանավոր հայ մարդու կերպարն ստեղծվում է ոչ միայն դրական հատկանիշերի կուտակումով, այլև բացասականի քննադատությամբ, ինչ-

պիսին է «Մարդ էլ կա, մարդ էլ» երգիծանքը, ինչի մեջ լավի կողքին վատն է՝ նա, ով «Ելել է շալակն աշխարհի»: Ստեղծվում է արգահատելի մի կերպար՝ աթոռապաշտ, քծնող, շողոքոթ, պարծենկոտ, խարդախ, ուն նմանները, սակայն, կյանքի տերերն են: Այս կերպարը թեւ նորությունն է՝ գրականության մեջ, բայց Սեւակի շեշտադրումը տեղին էր եւ ժամանակին, որովհետեւ այդպիսիներն աստիճանաբար շատացան եւ 1970-ականներից դարձան դրության տեր: Սրանց դատն ու դատաստանը դեռեւս պիտի աներ հաջորդ գրքերում: Առաջինի մարդու կերպարն ամենեւին չի մնում լուսանցքներում, մարմնավորվում է «Ձեռքեր»-ում, է. Սեծելայտիսի «Մարդը» գրքի թարգմանություններում: Այս գործերում հայրենիք բառը չկա, բայց գեղեցկված են հայրենասիրական շարքի մեջ, որովհետեւ հայրենիքը ոչ միայն ժողովրդի անցյալն ու ներկան է, ծնունդն ու գովեստն է, այլև բարոյական մարդը: Մարդը եւ ոչ թե նրա մասին եղած ճառն ու քարոզը: Դեպի մարդը, որ արդեն իսկ ձևավորված «Մարդը ափի մեջ» շարքն էր՝ գեղեցկված նաեւ այս գրքում: Խորանում է մարդկային պարզ երջանկության մտայնությունը («Մեր երջանկությունը»): Չնոռանանք ժամանակը գրվել է 1951-ին, երբ երկիրը նոր էր վերացնում պատերազմի ավերածությունները, իսկ ժողովուրդը նյութական դժվարությունների մեջ էր: Ահա այս պայմաններում համբերության կոչ է անում.

Մենք չապիկով չծնվեցինք:
Եվ մեզ համար
Ուրիշ տեսք է երջանկությունը
միշտ եղել:
Մեզ ծնել է, աշխարհ բերել
համեստ մի մայր,
Բայց մեզ ինքը՝ պատմությունն է
որդեգրել:
... Համեստ մի տուն,- բայց գիտե՛հինք,
որ հայրաբար
Լայն աշխարհն է իր դռները
մեր դեմ բացում:
Աշխատանքի, ծառայության
տանող ճամփա,-
Բայց գիտե՛հինք, որ գալիք է
նա մեզ տանում (1, 180):

Այս շրջանակում հայտնվում է Լեւոնը («Բալլադ լույսի մասին»), հայտնվում են պատերազմի հերոսները («Հերոսները»), գարնանամուտի հրճվանքը, երբ կարծես բոլորը քեզ հարազատ են այն աստիճանի, որ «Ուզում ես մոտենալ, մի բարի խոսք ասել // Գլանակ վաճառող ծերուկին, // Քեզ դիմող կոլխոզնիկ քեռու հետ սկսել // Մի գրույց սրտառուչ-սրտագին» (1, 189): Վարձան նման գրավիչ են նաեւ ծննդային տեսարանները, բնաշխարհի գեղեցկությունները, այդ բնաշխարհի արդար մարդիկ, նաեւ ինտերնացիոնալ բարեկամությունը («Ձյունը», «Բնանկար», «Լեռնային գիշեր», «Լեռնաշխարհում», «Արտերն են ծփում», «Ինքն իր հետ», «Մեր լույսերը»): Շարքն ավարտվում է «Նորից երգում, մորմուռում է...», ութնյակով, ինչն հետո որպես քառյակ տեղը պիտի գտներ «Անլռելի...»-ում: Այս տրամադրություններն արտահայտվում են նաեւ գրքում գեղեցկված սիրային «Նույն ճամփով» եւ ապա «Մարդը ափի մեջ» դեռեւս չամբողջացած շարքերում («Տան երազը», «Փառաբանում են», «Մեռնել», «Ապրել», «Երգել», «Հայտարարում են»): «Նորից քեզ հետ» գրքում Սեւակն ավելի խորհրդային բանաստեղծ է, «Ծուխ ծխանի» շարքը գեղարվեստական բարձր արժեք է, միջին դրակի խորհրդային պոեզիա է, կա եւ Լեւոնին, եւ համայնավարություն, եւ հաշտություն զաղափարական պահանջների հետ, դեռեւս զգացվում է Մեծ Հայրենական շնչառությունը, բայցեւ ամուր էր նաեւ փոքր հայրենիքի ձողակակությունը, աստիճանական վերադարձը ազգային հիմքերին:

«Մարդը ափի մեջ» (1963) ժողովածուն միանգամից գրավեց հանրային ուշադրությունը: «Ավանգարդ» թերթը կազմակեր-



պեց ընթերցողական քննարկում: Իր գրական ոճը նկատի ունենալով՝ հեղինակը խորհուրդ է տալիս ճիշտ կարդալ գիրքը. «Որովհետեւ կոճկվածությունը պատիվ է բերում գինվորականին, բայց ոչ արվեստագետին, որովհետեւ ճերմակ վերնաշապիկին կարող է փողկապ կապել ամեն ոք, բայց ոչ մրցության ելած մարզիկը, որը եթե բանաստեղծի եղբայրը չէ, ապա խաչեղբայրն է: Որովհետեւ... մատրոնտիր-իստակված լեզուն միշտ ենթադրում է հոգեկան աղքատություն եւ արվեստի պակաս (եթե չասես բացակայություն)» (5, 229): Գիրքը բերեց նոր որակ, նոր գեղագիտություն: Այդ կապակցությամբ ավելացնում է. «Ընթերցողներից ոմանք քննարկվող գրքի մեջ տեսնում են բարոյություն, ռեբուս-հանելուկայնություն: Ես հակված չեմ այս երեւույթը բացատրել ընթերցողների կրթական մակարդակի բազմազանությամբ միայն: Վճռական դեր ունի նաեւ սովորույթի ուժը, շատերի մեջ արմատացած այն թյուր կարծիքը, թե բանաստեղծությունը ջրի պես մի բան է. պիտի խմես... ու վերջացավ» (5, 234): Այս մտահոգությունները կային, որովհետեւ ընթերցողը ջերմորեն էր ընդունել «Անլռելի...»-ն, բայց ահա «Մարդ...»-ը դեմ առավ ընթերցողական ճաշակին: Ուստի հեղինակն ստիպված եղավ հասկանալու դիրքորոշումը, ըստ որի՝ ընթերցողին ավելի գրավել է հայրենասիրական նյութը, քան իր խոսքի նորարարական թարմությունը՝ որպես գեղագիտական համակարգ, ինչն առկա էր նաեւ «Անլռելի...»-ում եւ հայրենասիրական մյուս գործերում: Նման դեպքում, ինչպես ասում են, մյուսը քաշում է: Ընդդեմ միջակացման Սեւակն ընդվզեց այս ձևով: «Կարճին՝ // Անտառի կանաչ շանթարգել» («Միայնակ ծառը»). այսինքն՝ միայնակ բանաստեղծը ընկած ճաշակի շանթարգելն է: Սեւակը հասել էր ամբողջական մի գեղագիտության, նրա համար հավասարապես թանկ էր ամեն ինչ՝ նյութը, լեզուն, արվեստը, որովհետեւ առաջնայինը բարձր պոեզիան էր. «Քամին է երգում ինչ-որ եղանակ, // Որ Բեթհովենին պատիվ կբերի: // Մութ հորիզոնին աղոտ այգալույս // Մի ռեմբրանդյան նորահայտ նկար: // Շեքսպիրին է կյանքը ձեռ առնում // Իր ողբերգական դրամաներով... // Իսկ մե՛նք՝ ես ու դու... արվեստ ենք խաղում // Եվ... մի այնպիսի համոզվածությամբ, // Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...» (1, 321): Այսպես բարձր արվեստի պահանջներով նա սահմանում է մեծերի վարքը («Վարք մեծաց»), ովքեր անգամ իրենց կյանքի գնով առաջ են մղում արվեստի ճանապարհը: Այդպիսին է յուրաքանչյուր լուրջ ստեղծագործողի ճակատագիրը («Բանաստեղծի կյանքը»), որ հիմա եկել հասել էր Սեւակին:

Հայրենագությամբ «Մարդ...»-ը մի քայլ առաջ էր: Այստեղ են «Հարկ հոգեկան» շարքը («Երգ վեռածայն», «Մայրենի լեզու», «Խոսք հավաստիքի»), «Եվ այդ մի Մաշտոց անուն» պոեմը, առանձին գործեր: Մարդաորոնման բազմակողմանի հորձանքը իր մեջ

բնականորեն տեղ պիտի տար նաեւ հայրենասիրությամբ, որովհետեւ մարդն այդ շարքում ամբողջական է՝ որպես ապրումների մի երգեհոն: Դա է պատճառը, որ նույն գործն ունի տարբեր շերտեր, ասենք՝ եւ հայրենիք, եւ ինքնաճանաչում, եւ կին, եւ բնաշխարհ... «Դառնում փառաբանեմ», ասում է ու սկսում փառաբանել մարդուն՝ որպես մարդկայնության հավաքական խորհրդանշան, ժամանակի մարդ: Նույնը «Ինքս ինձ հերքում եմ»-ում: Չեւակերպում է ապրելու նախապայմանը. «Ապրե՛լ, ապրե՛լ, այնպես ապրել, // Որ սուրբ հողըդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը...» («Ապրել»): Հաջորդում են համապատասխան պատկերներ. «Դողդողում եմ // Որդուս վրա, // Եվ քո սիրո՛, // Բախտի՛ վրա իմ տարագիր ժողովրդի» («Մարտուն եմ»), «Խոստանում եմ // Լինել ոչ թե հարկիավաքը, // Այլ գավա՛կը // Դժվար դարի...» («Խոստանում եմ»): «Կարոտն եմ»-ի առանձին տողեր վերաբերում են նաեւ հեղինակի կերպարով ընդհանրացած հայրենասերներին. «Ես կարդում եմ եւ... հասկանում, // Որ թեպետ ես ինձ հերոսի տեղ եմ դնում, // Բայց շատ հաճախ նրա ճամփից չեղ եմ գնում,- // Նա խիզախ է, իսկ ես՝ զգույշ, // Նա գործում է, ես լոկ՝ զգում. // Նա կարող է, թե տեղը գա, // Եվ գոհ գնալ, անվախ մեռնել, // Իսկ ես՝ նրան... լա՛վ ըմբռնել... // Հեշտ է, գուցե, գրքեր գրել՝ ոչ թե կարդալ...» (1, 395): Ներշնչանքի բարձրագույն աստիճանն այս է. «Առանց գծվելու՝ չկա՛ շահած մարտ» («Գծվում եմ»): Հաջորդում է մի բաց հորովարակ՝ «Դիմում եմ պահանջելու պես», ինչը ժողովրդի ճակատագիրն է: Դիմում է Նոր տարուն եւ պահանջում, որպեսզի արդար լինի բոլոր ազգուցեղերի համդեպ. «Եվ որ այլեւս ոչ մի ժողովուրդ, // Ոչ մի ազգ ու ցեղ // Պատմության քափից ու սեւ մորուրից չթունավորվի, // Դառնա լիազոր, դառնա լիիրավ» (1, 402): Վայ է տալիս ու ողբում. «Այն արձագանքին, // Որ հոգնած «մեռա»-ն // Դարձնում է «ուռա»՝ («Ողբում եմ»): Յուրաքանչյուր պատմություն՝ առավել եւս Հայրենականը, ծանոթ էր այդպիսի հոգնած մեռաների եւ արհեստական ուռաների: Ճակատը պահող գործի թիկունքում նրանց հնարավոր նահանջը կասեցնող անվտանգության մարմինների գինված աշխատակիցներն էին, որոնք իրավունք ունեին վերահսկելու եւ անգամ գնդակահարելու յուրայիններին: Հաջորդում են հայրենիքին նվիրվածության հավաստիացումները. «Հիշենք բելոր ընկածներին // ... // Թող մայր հողը նրանց վրա թեթե՛լ լինի // ... // Հիշենք նաեւ նրանց ծնող, // Նրանց սնող, // Նրանց գինող // Հայրենիքը հերոսամայր» («Հրավիրում-որախանում եմ»): Վերջում հպարտանում է նաեւ իր ինքնությունը, որովհետեւ այդ ինքնությունը մի բուռ հայրենի հողի ծնունդ է:

(Հարունակելի)
Դավիթ ԳԱՍՊՐԱՅԱՆ
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր



Մրցույթի հրավեր

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը (ՀՌՀ) հայտարարում է մրցույթ հետեւյալ ամբիոնների վարիչների պաշտոնների տեղակալման համար:

- Համաշխարհային քաղաքականության եւ միջազգային հարաբերությունների ամբիոն,
- Զբոսաշրջության եւ ծառայությունների ոլորտի ամբիոն,
- Ընդհանուր եւ դեղագործական քիմիայի ամբիոն,
- Կինոյի եւ հեռուստատեսության ամբիոն,
- Մաթեմատիկայի եւ մաթեմատիկական մոդելավորման ամբիոն,
- Համակարգային ծրագրավորման ամբիոն:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ 2024 թ. մարտի 1-ը ներառյալ**՝ հետեւյալ հասցեով. Երեւան, Հովսեփ Էմինի փ. 123, Հայ-Ռուսական համալսարան, 2-րդ հարկ, 213 սենյակ (ՀՌՀ Կարդերի բաժին):

Մրցույթի պայմաններին մանրամասն կարող եք ծանոթանալ ՀՌՀ կայքում՝ <https://rau.am/event/konkurs-rau-2024> կամ զանգահարել **(012) 26-04-19** հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում եւ զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության դասախոսի, «Մարքեթինգային հմտություններ», «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ», «Աշխատակազմի կառավարում», «Միջոցառումների (MICE) կազմակերպում եւ սպասարկում հյուրանոցներում եւ զբոսաշրջային համալիրներում» մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է՝ ըստ Չարենցավանի պետական քոլեջի մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգի:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.**
1. դիմում,
 2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (ընտրիճակը եւ պատճենը),
 3. անձնագիր (ընտրիճակը եւ պատճենը),
 4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
 5. ինքնակենսագրություն,
 6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
 7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջի ազատված օտարերկրացիների,
 8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (ընտրիճակը եւ պատճենը),
 9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց անկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թ. հունվարի 31-ից մինչեւ փետրվարի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Չարենցավանի պետական քոլեջում, հասցեն ք. Չարենցավան, Խոթենացի 1:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. փետրվարի 16-ին՝ ժամը 13:00-ին եւ 15:00-ին**, Չարենցավանի պետական քոլեջում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0226) 4-32-82, (077) 59-96-75, (077) 61-45-20 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի հ. 31 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆրանսերենի (17 դասաժամ), կերպարվեստի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ փետրվարի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 16-ին՝ ժամը 13:00-ին**, Երեւանի հ. 31 հիմնական դպրոցում, հասցեն ք. Երեւան, Հ. Հովսեփյան 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 42-01-50 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ջաղացածոր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ռուսաց լեզվի (19 դասաժամ), ֆիզկուլտուրայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ փետրվարի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 16-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջաղացածոր գյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն ք. Ջաղացածոր, 2-րդ փ., 2-րդ նրբանցք, շ. 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 40-06-26 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի հ. 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (2 մասնագետ, 32 դասաժամ), հասարակագիտության (15 դասաժամ), բնագիտության, բնության (8 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների եւ աղջիկների խմբեր, 6-ական դասաժամ), մաթեմատիկայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ փետրվարի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 16-ին՝ ժամը 14:30-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի հ. 2 միջնակարգ դպրոցում, հասցեն ք. Քաջարան, Արովյան 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 3-21-23, (098) 15-47-00 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Այգեգարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայոց պատմության (6 դասաժամ), կենսաբանության (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ փետրվարի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 15-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արարատի մարզի Այգեգարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն ք. Այգեգարդ, Մաշտոցի 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 59-22-43 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի Ա. Դովհաննիսյանի անվան հ. 194 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ փետրվարի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 15-ին՝ ժամը 14:30-ին**, Երեւանի Ա. Դովհաննիսյանի անվան հ. 194 հիմնական դպրոցում, հասցեն ք. Երեւան, Նոր Արեւ, փ. 7, շ. 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 45-39-20 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի հ. 75 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ փետրվարի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 16-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի Արարոյի Հակոբյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում, հասցեն ք. Գառնի, Խ. Արովյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 48-02-90, (010) 48-88-90 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Լեռնահովիտ գյուղի Վ.Քարենցյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (24 դասաժամ), անգլերենի (15 դասաժամ), ֆիզկուլտուրայի (19 դասաժամ), հայոց լեզվի եւ գրականության (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի՛ Ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՛ս, սիրելի՛ Ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել էլ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կլուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոսակցողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խորթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքեն, դրականը դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի՛ Ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, հանգոված եղիր, «Կրթությունը» անարատ հոգեւոր սնունդ է տալու քեզ, եւ ո՛չ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՛ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՛ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՛ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՛ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո թերթը, որ այն օրավուր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դու՛ ես՝ եւ բարոյապես, եւ նյութապես: Քո՛ բաժանորդագրությանը, կրպակներից Քո՛ գումարներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

* * *

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել **10400** դրամ եւ ստանալ բոլոր **52** համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը **5200** դրամ է (**26** համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել **2600** դրամ (համապատասխանաբար կստանաք **13** համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:




Շաբաթաթերթ «Krtutun» (education) weekly «Кр тутун» (образование) еженедельник 12.10.2005

Մայրաքաղաք

Բիայնիլի-Վան, Էրերունի-Երեւան... Քանի՞ դար կա այս անցումների միջեւ... Նախիջեւան-Երեւան-Իջեւան... Ե՛րբ է Նոյն անցել այս ուղեթուղով...



«К р т у т у н» е ж е н е д е л ь н и к 05.10.2005թ. չորեքշաբթի թիվ 28 (175)



«К р т у т у н» е ж е н е д е л ь н и к 18.08.2005թ. հինգշաբթի թիվ 21 (108)



ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
««Կրթություն» թերթի խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ա-049349, Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ Մեծի 67,
E-mail: krtutun@yandex.ru
ԴեՆ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրվում է՝ «Գինդ» տպարան ՄԳԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70 ա:
Տպաքանակը՝ 2000:
Ճավալը՝ 4 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 30.01.2024թ.
Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ